



241

n-20





ОСНОВЫ

ИЗДАНИЕ

U. S. E. U. T. U. P. U. U.

U. S. E. U. T. U. P. U. U.

— 0000 —

13

U. S. E. U. T. U. P. U. U.

THE UNIVERSITY OF CHICAGO  
LIBRARY

1955

# Փ Է Ն Հ Է Յ Մ

Կ Ա Մ

Ա Ռ Ա Ք Ի Ն Ո Ի Թ Ի Ի Ն

ՎԱՐՁԱՏՐԵԱԼ



Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ս Ո Ի Բ Բ Ղ Ա Ձ Ա Բ

1855




0015348

0015348

0015348

0015348




59807-2



588-2007







13

Fig 46.

LULST

Ս. Ռ. Ս. Ք. Ի. Ն. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն.

Վ. Ա. Ր. Ձ. Ա. Տ. Ր. Ե. Ա. Լ.

Գ. Լ. Ո. Ի. Խ. Ա.

Մ. ր. ր. Ի. Կ. .

( ) Ը մը այնպէս սաստիկ տաք եղաւ որ իրիկուան անուշ հոմն ալ չէր զովայնէր խղզուկ օդը . և մարդիկ չէին կրնար շունչ առնուլ , ու ամէնքը տններնին դառնալու ատեն՝ գիշերս մըրիկ մը պիտի ըլլայ կ'ըսէին : Այլ յիրաւի տեսան որ հորիզոնէն ամպեր կ'եղէին կը թանձրանային , ու բոլոր երկնքին երեսը կը պատէին մէկ սեաւ ծածկոյթի մը պէս : Հոն մէկէն լուսեցաւ հեռուէն որոտման ձայնը , որ կը թնդացընէր օդը , ջուրերը կը դոջէին , ու լեռ-

ները արձագանգ կու տային , և բոլոր մարդկանց սիրտը ահ ու դող ընկաւ :

Մարդ չէր կրնար քուն ըլլալ , շատ պատանիներ որ ինչուան ան օրը մեղկ ու անատակ կեանք մը ունէին , բնութեան ասանկ տակնու վրայ եղած ատենը ճանչցան գերագոյն տեսան բարկութիւնը՝ որուն օրէնքները մոռցեր էին : Շատ ան պարիշտ մարդիկ որ սրտերնէն դուրս ձգիր էին Մատուծոյ անունը , կը խոստովանէին մտքերնուն մէջ թէ Մատուծ մը կայ՝ որուն կարողութիւնը յայտնի կ'ըլլար ան ատենը տարերաց այս խառնակութեամբը : Աւ շատ փառասէր անձինք աս ահաւոր ձայները իբրև Մատուծոյ ազդարարութիւն մը կը համարէին , որ անգաղար դո՞՞նալովը ինչպէս թէ աշխարհիս վերջը կ'ըստ պահնար : Արոնք որ թշնամութեամբ կ'ապրէին՝ մտքերնին դրին հաշտուելու իրենց թշնամեացը հետ . և որոնք որ անիրաւութեամբ հարստութիւն ձեռք ձգեր էին , առաջագրեցին ետ դարձնել :

Արաճ խօսքով ամէն մարդ խելքը գլուխը ժողովեց՝ տեսնելով եկած հասած վտանգը իրենց վրայ . բայց ինչուան որ անոյնի

մէյմը այս նեղութիւնը , ու իրենք ալ մոռնան իրենց խոստմունքը : Տես մարդուս բնութիւնը . վախը Աստուծոյ ոտքը կը ձգէ , ու աստիճանութիւնը և թեթևամտութիւնը կը հեռացնէ անկէ :

Կը շարունակէր փոթորիկը , բայց որոտման ձայներուն յաջորդեց ահաւոր հանդարտութիւն մը , ու բովանդակ երկիրս վախէն սարսափած՝ կարծես թէ կ'ըստատէր լուծեամբ տարերայ կուռին վերջը տեսնելու . և քանի որ բոլոր քաղաքը ասանկ ահու դողու մէջ էր , յանկարծ կայծակ մը ամպերէն սահելով ինկառ Վէնհէյմ անունով վաճառականին տանը վրայ : Հազիւ թէ քանի մը վայրկեան անցաւ , մէյ մին ալ ինչ կընայիս , ելեքտրական հեղուկը բոլոր տանը մէջ շրջան ընելով զանազան կողմէն բռնկցուց շէնքը . ու մութ գիշերը հոն մէկէն ահագին բոցերով լուսաւորեցաւ : Աս սուկալի հրդեհին լոյսը իմացուց քաղաքին՝ որ Աստուած իր բարկութեան նշանը ցրցուց իրենց : Տակնու վրայ եղան ամէնքը , վազեցին տեսնելու այս ողորմ տեսարանը , բայց բոլոր պատրաստական օգնութիւնին պարապի

զնայ , և կերպով մը չկրցան արգելուլ  
որ կրակը չտարածուի : Հովը սաստ-  
կութեամբ կը փչէր , ու քիչ ատենուան  
մէջ քսան տունէն աւելի այրելով մոխիր  
դարձան :

Չերկնցրնեմ հոս խօսքս նկարագրելով  
այս ահաւոր տեսարանիս սոսկումը , խեղ-  
ճերուն աղաղակը , աղմուկը . մէկ կողմանէ  
խոռովութիւն և յուսահատութիւն , մէկալ  
կողմանէ մեծամեծ խոստմունքներ բարե-  
պաշտութեան սիրով մը շարժած : Այ  
բոլոր բնակչաց բազմութիւնը մէկ հոգւով  
քաջալերուած ժրաջան փութով մը ետեւ  
էին կրակին առաջքը առնելու՝ որ կատա-  
ղութեամբ կ'ուզէր լափել բոլոր քաղաքը :

Առաւօտեան դէմ հազիւ կրցան կոխել  
կրակը . սարսափնին խիստ մեծ եղաւ ,  
երբոր տեսան յիսուն ընտանիքէն աւելի որ  
իրենց էրած տանը խանձողած աւերակնե-  
րուն չորս կողմը պտըտելով , և ողբալի  
ձայներով քաղաքը կը լեցնէին : Քաղքին  
եկեղեցականները հարուստ մարդկանց օգ-  
նականութեամբ ժողկեցին աւելի չքաւոր-  
ները , ու բաժնեցին իրենց ողորմութիւն .  
բայց ներկան միայն չէր մտածելիքը՝ հասպ

նաև սասկալի ապագան : Աս քաղաքը որ  
երէկ դեռ այնպէս ծաղկած էր , ողորմելի  
տեսարան մըն էր եղած ան ատենը : Ամէն  
դին ողբ ու լաց , ամէն դին թշուառու  
թիւն , յուսահատութիւն ու տխուր աղ-  
քատութիւն :

Ֆէնհէյմ վաճառականը ամէնէն աւելի  
քաղաքացւոյ կարեկցութիւնը կը շարժէր ,  
որ ամէնուն սիրելի էր ու սրատուական .  
վասն զի իր աստուածաբաշտութեամբը ,  
առաքինութեամբը և աղքատսիրութեամբը  
գոմելի եղած էր քաղքիս մէջ : Աինը ու  
աղջկեր Յուստինէ իրենց առաքինու-  
թեամբը ու արժանի քրիստոնէի վարքո-  
վը՝ կանանց մէջ մեծ պատիւ ունէին :  
Ֆէնհէյմ սաստիկ վշտացած գլխուն եկած  
փորձանքովը՝ ամենեւին չգանդատեցաւ Աս-  
տուծոյ գէմ , ինչպէս ուրիշ ընտանեաց  
տէր մարդիկը՝ որ այս դժբաղդութեանը  
հանդիսեր էին . հապա բռնելով կնոջը ու  
աղջկանը ձեռքէն տարաւ եկեղեցի մը . ը-  
սելով թէ Աստուած տուաւ ու Աստուած  
առաւ . իր սուրբ անունը օրհնեալ ըլլայ :

Աստուծոյ տաճարին մէջ գնաց ընկաւ  
խորանին դիմացը՝ ուր որ սրբութիւնը դը-

լուած էր , միտքը վերցրնելով առ Աստուած որ առանց անոր կամայք աշխարհիս վրայ բան մը չարատահիր , սկսաւ ազօթել այսպէս : — Ո՛վ Աստուած իմ , ըսաւ սրտաշարժ ձայնով մը , ահա քու դիմացդ կամ աղքատ ու ամէն բանէ զըրկուած : Գիտես դու , որ ես չեմ պատճառ իմ այս դժբաղդութեանցս . իրաւ է որ մեղքերուս համար արժանի եմ աս փորձանացս , բայց որովհետեւ կենացս մեջ քեզմէ այնչափ բարութեանց նշաններ ընդուներ եմ , ուստի կը համարձակիմ յուսալու միշտ քու հանապազորդ բարութեանդ : Իրաւ է՝ որ մանաւանդ աս վայր կենիա մեջ չեմ գիտեր ինձի ըլլալիքը , որ կու գամ աղաչելու քու ողորմութիւնդ կենդանի յուսով մը : Ո՛վ Աստուած իմ , զժամ ինձի , օգնութիւն հասիր , ես քու որդիդ եմ , դու ալ իմ հայրս . փարժամութիւն չեմ խնդրեր , բայց միայն ինչ որ սորմեցուցիր դու մեզի քեզմէ խնդրելու , “ Օհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր , և թո՛ղ մեզ զպարտիս մեր , ” Գժա նոյնպէս ամուսնոյս ու աղջկանս , որպէս զի կարենանք օրհնել զքեզ ու



գումլել՝ ինչպէս որ ինչուան այս օրս ըրեր  
ենք :

Ֆէնճէյմ չկրցաւ շարունակել աղօթքը՝  
ջերմաջերմ արցունքը կը վազէր աչքերէն .  
Ազնէս իր կինը և Յուստինէ՝ հառաչանք  
նին ու իրենց ուխտը միացուցին անոր  
հետ , ու աղաչեցին զԱստուած՝ չժողուլ  
զիրենք այս խեղճ միճակին մէջ :

Այսպէս աղօթքով զօրացած , իրեքն  
ալ եկեղեցիէն դուրս ելան՝ քիչ մը հոգ  
տանելու իրենց կենացը : Ֆէնճէյմի բա-  
րեկամներէն մէկը եկաւ իրեն , ու տունը  
տարաւ զիրենք , ցորեկուան կերակուր հա-  
նեց . ու աղաչեց որ հոն մնայ մինչև որ  
բանի մը ձեռք զարնէ : Հոս այս պա-  
տուական մարդուն տունը , ցորեկուան  
կերակուրէն ետքը սկսան խօսիլ իրենց մի-  
ճակին վրայ . բայց Ֆէնճէյմ գիտնալով  
իրեն բարեկամին միճակը՝ յանձն չառաւ  
երկայն ատեն հոն կենալու , վախնալով  
չորայ թէ ծանրութիւն ըլլայ իրեն : Ուս-  
տի շնորհակալ եղաւ բարեկամին ազնուա-  
կան շնորհքին , ու կնոջը և աղջկանը հետ  
գնաց : Իր այրած տնին աւերակին դիմա-  
ցէն անցնելու ատեն՝ չէր կրնար արցունքը

բունկ , ու քանի մը մխիթարական խօսքեր  
զրուցելէն վերջը՝ ուրիշ իրեն նման լացող  
խեղճերուն , ելաւ գնաց քաղքէն՝ ուր ուր  
տխուր յիշատակէն ուրիշ բան չէր գտնար  
իրեն համար :



ԳԼՈՒԽ Բ

Ապաշինելու տեղ մը .

ՖԷՆՏ ԷՅՄ հղատորդի մը ունէր սա-  
հապան ու վերակացու անտառի , որ քաղ-  
քէն քիչ մը հեռու գուարձալի դեղ մը կը  
բնակէր : Այս որովհետեւ աս մարդս աղէկ  
բաղդի մէջ էր , ուստի միտքը դրաւ իրեն  
երթալ , բնակութիւն մը խնդրելու իրեն և  
իր ընտանեացը համար : Աս գեղս երթա-  
լու ճամբան խիստ գեղեցիկ տեսարան մըն  
էր ան ատենը . բլրի վրայ կ'երևնային  
ամբիթէատրոնի պէս ազուոր այգիներ՝  
զարդարուած մեծ մեծ գեղեցիկ ստղա-  
լից ծառերով , որոնց կանանչ գազա-  
թունքը օդին մէջ կը բարձրանային : Այս  
գետտանները չորս կողմանէ ակասիա և  
օպէփին ծառերով յանկասկատ էին , ո-  
րոնց դալար ոտտերուն վրայ բազմութիւն

Թռչնոց թառեր էին ու քաղցր երգերով նին իբրև թէ ոգևորէին աս գեղեցիկ գեղս :

Նոյր ստորոտը ընդարձակ ցորենի արտեր էին , որոնց մէջը գեղեցիկ կը բարձրանային հարսնուկ ու խաշխաշի ծաղկըները ոսկեգոյն հասկերուն մէջէն : Հոտաւէտ ծոթրինը կը սպատէր բլրին մէկ կողմը , ուր լեցուն թիթեռնիկներ փալփլուն թևերով ծաղկէ ծաղիկ կը թռչտէին . իսկ փութաջան մեղուն ծաղկանց վրայ թառած իրեն ազնիւ աշխատանայր հարկ եղած նիւթերը կը ժողվէր :

Արևը իր ճառագայթարձակ գլուխը կը բարձրացրնէր զուարճալի ու ճոխ երկրին վրայ , ու բոլոր արարածոց նոր կեանք մը կուտար : Անկէ քիչ մը հեռու ոչխարներու հօտ մը ծաղկազարդ հովտի մը մէջ ցատկըռտելով կ'արածէին . իսկ հովիւը զուարճութեամբ մը երկնցած մեծանիստ կաղնիի մը տակ իր գեղջկական տիճորով օդը կը թնդացրնէր :

Թէպէտև ուրիշ ատեն Քէնհէյմ ու իր ընտանիքը կ'ըզմայլէին զարմանալով այսչափ մէկ տեղ եկած գեղեցկութեան վրայ ,

բայց ան ատենը բնութեան աս տեսարանը  
ու երկրիս գեղեցկութիւնը մեծ ազդեցու-  
թիւն մը չէին ընել իրենց վրայ, որով-  
հետեւ բոլոր սրտերնին ցաւու մէջ ըլլալով  
ուրիշ բան չէին մտածել բայց իրենց  
խեղճութիւնը միայն, ու աչքերնուն ա-  
մենեկին արտաքին գեղեցկութիւն չէր ե-  
րևար :

Այս գրեթէ կէս ժամ մը քալել էին  
ատանց ամենեկին բերաննին բանալու .  
իսկ ան ատենը ըսաւ Յուստինէ իր  
հօրը .

— Հայր, միտքս բան մը եկաւ, կ'ուզեմ  
հրամանքներնուդ յայտնել. թէ որ մեր  
ազգականը Ալալտէ չկրնայ զմեզ ընդու-  
նիլ, վաղը ես կը դառնամ քաղաքը, ու  
կ'երթամ կոմսուհի Վահոն տիկնոջ՝ որ  
խնամածու աղջիկ մը կ'ուզէ իր տղոցը հա-  
մար : Թէպէտեւ իրեն սա հանջած կարո-  
ղութիւնը չունիմ, բայց կարելի է որ ըն-  
դունի զիս՝ գթալով մեր դժբաղդ վիճա-  
կին : Իրմէ ընդունած վարձս կարծեմ բա-  
ւական ըլլայ հրամանքիդ ու մօրս ապ-  
րուտին, ինչուան որ Աստուած օգնէ  
մեզի :

— Հորհակալ եմ դուտար իմ, քու այս-  
չափ որդիական սիրուդ վրայ . բայց չեմ  
կարծեր որ Մահոն տիկինը կամենայ զքեզ  
իր քույր առնուլ, վասն զի բաւական գի-  
տութիւն ու կրթութիւն չունիս՝ տան մը  
մէջ խնամածու ու վարպետ ըլլալու . դուն  
դեռ պղտիկ ես տարւօք՝ ան կրակոտ  
տղաքը սանձելու . ուստի հարկ է թողուլ  
ատ խորհուրդդ :

— Իսկ թէ որ ուրիշ օգտակար տեղ  
մը հանդրալի, ըսաւ Յուստինէ, կը թո-  
ղո՞ք զիս երթալ . վասն զի շատ իրաւացի  
կը տեսնեմ նուիրել իմ անձս անոնց հա-  
մար՝ որոնք այնչափ նեղութիւն քաշեր են  
իմ վրաս :

— Աստուած կը հոգայ, ըսաւ հայրը՝  
սիրտը շարժելով աղջկանը սիրոյն վրայ,  
յոյսերնիս իր վրայ դնենք, ձեռքէ չթո-  
ղուր զմեզ : Աւ առաջ երթալով հասան  
վերջապէս բլրին ստորոտը՝ ուր շինած էր  
իրենց ազգական Ալալտէի տունը :

Ալալտէին կինը նստեր էր իր տա-  
նը դիմացը չորս կողմը առած իր հինգ  
զաւկրները . ու Ֆէնհէյի ընտանիքը  
տեսնալով՝ պոռայ . ու անոնց տխուր

դէմքէն և ծանր քաղուածքէն ճանչցաւ ի-  
րենց գլխուն հանդիպած դժբաղդութիւնը:

— Ո՛վ տէր Աստուած, ըսաւ բարձր  
ձայնով մը, արդեօք ի՞նչ բան հանդիպե-  
ցաւ. գիշերը տեսանք լոյսը ու կրակը, և  
անհանդիստ էինք մտածելով զձեզ. խն-  
դրեմք ի՞նչ բանի համար այսպէս տխուր  
էք:

Ֆէնհէյմ երկինքը նայելով, հառա-  
չեց մէյմը, ու արցունքը որ կը վազէր՝  
իրեն, իր կնոջը ու աղջկանը աչքերէն, ի-  
րենց խօսքէն աւելի ամէն բան յայտնեցին:

— Իմացայ, ըսաւ Տորոթէա Ալա-  
տէին կինը, աս ցաւալի գիշերուան դժ-  
բաղդներէն էք դուք ալ. բայց այնչափ  
մի վշտանաք, մեր տունը ձեր առջևն է  
ասհա, բնակեցէք ձեր տանը պէս. գիտ-  
նալով Աստուած որ հոս գալու էք, ա-  
ռաջուց հոգաց ձեր պիտոյքը՝ օրհնելով  
արտերնիս ու այգինիս. ուստի սպասով  
եղէք:

Ֆէնհէյմ իր ամուսինը ու աղջիկը,  
Տորոթէա ու տղաքը՝ արցունքնին սրբեցին  
ու մէկտեղ տունը մտան:

Տորոթէան ըսաւ անդրանիկ որդւոյն.

1002-885



Անստանդ , հօրդ գնա անտառը , գիտես  
ուր որ գնաց առաւօտը : Աոստանդ գը-  
խարին առած գնաց : Դուք ալ , ըսաւ  
հօրթէան երկու աղջկանցը , եկէք օգնե-  
լու ինձի խոհակերոցը՝ որ ցորեկուան կե-  
րակուրը սպարաստենք :

Այս առաքինի կիներ ամէն կարելի մար-  
դասիրութիւնը ու քաղցրութիւնը ցրցուց  
աս խեղճերուն , ու ջանաց զբօսցնել զե-  
րենք ինչուան որ էրիկը գայ : Արքեմն եր-  
բեմն կը թողուր խոհակերոցը՝ ասոնց հետ  
խօսակցելու համար , ու նորէն կը գառնար  
իր գործքին՝ կերպով մը ասոր ալ անոր ալ  
հասնելով :

Վերջապէս անտառէն եկաւ Վալտէն ,  
ու Քէնհէյմը տեսնելուն պէս , ձեռուները  
երկնցընելով զրկեց զինքը . — Ի՞նչ կը  
տեսնեմ՝ ըսաւ , սիրելի բարեկամ . այսպէս  
ուրեմն Աստուած խիստ կերպով մը ուզեց  
զձեզ փորձել . երէկ իրիկուն տեսայ ամ-  
սերը՝ որ կը ժողլէին ձեր քաղքին վրայ ,  
եաքն ալ հրդեհը , ու շատ մտածեցի զքեզ :  
Աղաչեցի առ ողորմածն Աստուած՝ որ սա-  
հէ զձեզ ամէն վնասներէ , բայց աղթքս  
ընդունելի չէ եղած : Արոշեր էի կէսօրը-



նէ վերջը գալ գտնել զձեղ՝ եղածն իմանալու համար, ու հիմա դուք ինծի եկաք ձեր գլխուն հասած խեղճութիւնը իմացնելու. բայց մի յուսահատիք, բնակեցէք մեզի հետ, քանի որ Աստուած հացերնիս կուտայ, դուք ալ կ'ունենաք ձեր մասը: Ի՞նչ որ հաւատքնիս կը սպարտաւորէ զմեզ օգնելու ո՞ւր եւ իցէ մեր ընկերներուն, ևս առաւել իրաւամբ կը սպարտաւորէ օգնութիւն հասնելու անոնց՝ որ մեզի հետ արեւակցութեան կապ ալ ունին. դարձեալ ուրիշ բան չէ մեր ըրածը, բայց եթէ կերպով մը մեր սպարտքը հատուցանել ձեզի, որ ուրիշ ատեն այնչափ բարիք ըրեր էք մեզի:

— Օրհնեմ Աստուծոյ գթութիւնը, ըստ Գէնիսէյմ, որ մեզի այսպէս ասպաւինելու տեղ մը ցրցուց, որով չենք ստիպուիր գոնէ քաղքէ քաղաք շրջելու՝ ինչպէս ուրիշ խեղճերու բազմութիւն՝ որ շուտ մը տեղ ու բարեկամ չեն գտնար: Ա՛հ, ես անոնց վրայ կը ցաւիմ. վասն զի մեր վիճակը անոնց հետ բազդատելով շատ քաղցր է, որովհետեւ այսպիսի տան մը մէջ ենք՝ որ զմեզ սիրով ընդունելով ամէն ունեցածներնուն ալ մասնակից կ'ընեն: Ար վայելենք

ձեր ազնուական սարգեր, սիրելի բարեկամներ, ու ձեզի հետ կը բնակինք ինչուան որ միջոց մը գտնենք ուրիշ տեղ փոխադրուելու :

Ատքը սեղանի նստան համառօտ աղօթք մը ընելով, և երկու ընտանիքը գրեթէ մէկ գերդաստան կ'երևար. վասն զի իրենց ազգականը առաքինի Ալալտէն՝ որ Յուստինէին կնքահայրն էր, ասոր և Ալէնէսին մէջ տեղը նստելով ամէն փոյթը կ'ընէր մոռցընելու իր հիւրերուն թշուառութիւնը. ճարտարութեամբ փոխեց խօսքը ուրիշ նիւթի մը վրայ, որ քիչ մը հեռացրէ խեղճերուն ցաւը :

Աերակուրէն վերջն ալ առաւ տարաւ զանոնք անտառը. — Աէտք է, ըսաւ, համեստ զբաղմունք մը փնտռել մեր վըշտայր ու նեղութեան ատեն, և յուսահատ չիյնալ ցաւերնուս մէջ՝ որ չփնասուի մեր առողջութիւնը: Աստուած մեզի փորձանքնիր խրկելով՝ իր խմաստուն հայրական խնամքը չպակսեցրնիր մեզմէ. երանի՛ անոնց որ կը ճանչնան, ու խոնարհելով զիրենք հարուածող դաւազանի տակ, չեն կորարնցրնիր վստահութիւննին գթած Հօրը վրայէն որ

կը խրատէ զանոնք . այլ ևս առաւել կ'ա-  
պաւինին աս փրկութեան խարսխին , աս  
սուրբ խաչին՝ որ իբրև դրօշ մը տրուե-  
ցաւ մեզի . որուն շուքին տակը պէտք է  
ստըտինք՝ որպէս զի կարենանք մեր եր-  
ջանիկ վախճանին հասնիլ : Ասան է  
քրիստոնէին բոլոր յոյսը . Յիսուս խա-  
չին վրայ մեռնելով՝ զանիկա սկիզբ ըրաւ  
իր յարութեան ու յազմութեանը . վասն  
զի չէր կրնար յարութիւն առնել եթէ  
չմեռնէր :

Նոյնպէս մենք ալ , փորձանքներէն  
վերջը , սլիտի սրացած անանք վարձուց  
ու շնորհաց օրը , փառաւորութիւնք անոր  
հետ՝ որ զմեզ մերձեցընելով իր խաչին՝  
կ'ուզէ մասնակից ընել անոր մխիթարու-  
թեանն ալ :

— Աս ալ հրամանքիդ պէս կը մտածեմ  
սիրելի բարեկամ , ըսաւ Ֆէնհէյմ , ու վըս-  
տահութիւնս առ Աստուած կը շատնայ  
տեսնելով չորս կողմն իր սքանչելիքը . կը  
տեսնեմ հոս հինաւուրց գեղեցիկ ծառերը  
զորոնք Աստուած մարդուս բարեոյն հա-  
մար դարերէ ի վեր սլահեր է . խիստ մրրիկ-  
ներով զարնուեր են , ու թերևս շատ ան-

զամ իրենց բարձրաբերձ գաղաթունքը  
կայծակնահար եղեր են . սակայն ինչուան  
հիմա տարերաց բռնութեան դէմ դիմացեր  
են ու կը դիմանան : Մեծ է մարդս Աս-  
տուծոյ առջևը քան բոլոր աշխարհքս .  
վասն զի այս երեւելի աշխարհս ստեղծելու  
համար բաւական եղաւ Աստուծոյ մի միայն  
խօսքը , ու մէկէն ելաւ ոչնչէն . իսկ մարդս  
փրկելու համար որդին Աստուած արիւնը  
թափեց : Արնայ երբեմն մարդ ամէն ստա-  
ցուածքէն այսպէս զրկուիլ , բայց Աստուած  
անոր համար չթողուր զինքը . ու ինչպէս  
որ կայծակէ զարնուած ծառերուն կու  
տայ իրենց կանանչութիւնը , ու տերեւնե-  
րուն գեղեցկութիւնը , այսպէս ալ կը դար-  
ձնի Աստուած գերազանց արարածոյ մը  
իր ստացուածքը , ուսկից քիչ մը ժամանակ  
զրկեր էր զինքը . թէ որ աս ալ չըլլայ ,  
բաւական է որ սրահէ Աստուած իր բա-  
րեկամութիւնը , որով ցաւելու մեծ բան  
չմնար :

Այսպէս կը խօսէին մէկտեղ աս սրա-  
տուական մարդիկը , կը ջանային զօրայր-  
նել իրենց հաւատքը բարձր մտածմունք-  
ներով՝ որ կրօնքը մանաւանդ ան թշուա-

ուութեան մէջ՝ մտածել կու տայ, ու իրենց ամէն քայլափոխին՝ բնութեան գեղեցկութիւնը կը զուարճացնէր :

Արրոր տուն գարձաւ ՖէնՏէյմ, Վալտէն տարաւ զինքը իրեն ու իր կնոջը Ագնէսին համար որոշած սենեակը : — Թէ որ, ըսաւ ՖէնՏէյմ, երէկ մէկը ինձի ըսած ըլլար թէ ստիպուիմ սլիտի աս օր քու քովդ բնակելու՝ չէի կրնար հաւտալ . ստոյգ է որ աշխարհիս մէջ գէտքերը սուկալի արագութեամբ մը զիրար կը յաջորդեն . և մէկը որ այսօր ինքզինքը հարուստ կը կարծէ, կրնայ ըլլալ որ վաղուան օրը ողորմելի աղքատութեան մէջ իյնայ . բայց Տէր է Աստուած, ամէն բան կ'ուղղէ իր փառացը ու մարդկան փրկութեանը համար : Օրհնենք իր դատաստանը առանց քննելու . և շնորհակալ ըլլանք իրեն բարեբարութեանցը՝ որ մեր վրայ կը սփռէ անդադար :

ՖէնՏէյմ հանգիստ զիշեր մը անցուց հոն՝ հանգերձ իր վշտօքը որ կը տանջէին զինքը, իր սիրտը հպատակեց Աստուծոյ կամայը, ու ասպահուցաւ իր վիճակին վրայ . ինքզինքը յանձնեց բոլորովին Աս-

տուժոյ ձեռքը՝ որ ամէն մարդկային բաղ-  
դին գերադոյն իշխանն է : Իբ կինը ու  
աղջիկն ալ իրեն օրինակին հետեւելով յոյ-  
սերնին Աստուծոյ վրայ հաստատեցին վըս-  
տահութեամբ մը որ անսպաւառ իրենց օգ-  
նութիւն պիտի հասնի :



ԳԼՈՒԽ Գ.

Տակձ .

ԱՍ Տիւրքնկալութենէն քանի մը օր  
վերջը , գեղին պաշտպան սուրբին սօնա-  
խմբութեան օրը եկաւ . Ապառէն , իր կի-  
նը ու տղոցմէ մէկ քանին որ առջի սրբու-  
թիւննին առած էին , պատրաստուելան  
ջերմեանդութեամբ պատուելու առ գեղե-  
ցիկ օրս՝ հաղորդուելով սուրբ խորհրդ-  
դոյն . Ֆէնհէյմ ալ իր ընտանեօքը անոնց  
հետեւելով գնաց հաղորդակից գտնուելու  
սուրբ սեղանոյն : Այս կրբ արդեօք աւելի  
մեծ եռանդեամբ աղօթք կրնային ընելու ,  
եթէ ոչ ան աստեղը որ աղբըսցած ու զըր-  
կուած էին ամէն քանէ : Տորբօքեալ սիրով  
մը վառուած մերձեցան սքանչելի խորհրդ-  
դին Աստուծոյ մարդացելոյ , որ ախտի  
ու մտոյ մը մէջ ծնանելով՝ սիրոյ աղքա-  
տութիւնը , որպէս զի մարդկանց աչքին  
բարձրացնէ , առ արհամարհ երկցած կեանք

քը , ու ցուցնէ իր օրինակումը թէ մարդկան երջանկութիւնը՝ հարստութեան վրայ չէ , որուն այնչափ փափաքով ետևէ կ'ըլլան անսխտ մարդիկ : Աւ այնպէս իրենց հաւատքը ու սէրը կ'աւելնար իրենց վաշտօրը :

Ո՛վ կրնայ պատմել ՖէնՏէյլի բարեպաշտութեան եռանդը՝ առնելով Արկնային հայր , ու Աստուծոյ հետ կապուելով . ուր բոլոր իր պիտոյքը տարածեց Աստուծոյ առջև , խնդրեց անոր օգնականութիւնը , ու աղաչեց որ պահէ զինքը ու իր ընտանիքը : Արկայն ասին աղօթքով մխիթարուած ու զօրացած՝ ետքաշուեցաւ խորանէն : Ատքը ներկայ եղաւ քարոզի ու ձայնաւոր պատարագի : Ի՛նչ մասդրութեամբ ըսեց զեղին պաշտպան սուրբ Վրենցիոսի ներբողը , որ մէկ պատուական եկեղեցական մը կու տար : Քարոզիչը աս սուրբ սարկաւազին գերազանց առաքինութիւնները նկարագրելէն վերջը , որ Աստուծոյ հաւատարիմ մնալով այնչափ սոսկալի տանջանայ համբերեց , հաւատացելոյ յորդոր մըն ալ ըրաւ , Աստուծոյ սէրը վառելու իրենց սր-



տին մէջ . իրաւ՝ հիմա մեր օրերը , կ'ըսէր ,  
արիւննիս Քրիստոսի համար թափելու  
հալածանք ու բռնութիւն չունինք , սա-  
կայն չենք ազատ մեր կրօնքին սրբութեա-  
նը վկայութեան պարտքէն , համեստ ու  
առաքինի կեանքով մը , մանաւանդ սուրբ  
վարքով ու խոնարհ հպատակութեամբ  
Աստուծոյ կամայը :

Այլուր ու սրտաշարժ նկարագրութիւն  
մը ըրաւ թշուառութեանց ու հալածանայ՝  
որ շատ սուրբեր առանց մարտիրոս ըլլա-  
լու քաշեր են : Աւ բոլոր ըտղները շար-  
ժեց , յորդօրելով զանոնք հաստատուն  
հաւատքով մը անցընելու աս թշուառ  
կեանքս , որ առանց արեան ու մարտիրո-  
սութեան ըլլալուն համար՝ Աստուծոյ առ-  
ջեր քիչ վարձուց արժանի չէ :

Հատ ազգեց քարոզը Ֆէնիչիլին սրբ-  
տին , ու լսած գեղեցիկ ճշմարտութիւն-  
ները մերձեցուց իր ներկայ վիճակին . նս-  
րողեց իր առաջադրութիւնը աւելի համա-  
կամութեամբ մը համբերելու իշտերու և  
փորձանքներու , որ Աստուած խրկիր էր  
իր վրան : Ատքը տուն դարձաւ , և իր ազ-  
գականն ալ մասնակից ըրաւ քարոզին իր

մտայր վրայ ըրած ազդեցութիւններէն :  
— Սուրբ Եղեռնեցիոսի օրը մտքէս շուտ  
պիտի ջանայնի , կ'ըսէր , որ այսչափ մխի-  
թարութիւն ունեցայ , և վստահութիւն  
մը թէ Մտուած ուրիշ մխիթարութիւն  
ներ ալ պիտի տայ ինձի :

Ազնուասիրտ Տորթեան ալ ան օրը  
սովորականէն աւելի կերակուր պատրաս-  
տեր էր . էրիկն ալ քանի մը շիշ հին ու  
պատուական գինի գտեր էր , իր ընտա-  
նիքը պատուելու համար :

Արբոր սեղանի նստան , զանազան խօ-  
սակցութեան մէջ խօսքը ինկաւ Ֆէնհէյմի  
որդւոյն վրայ : Աս պատանին լաւ բարե-  
պաշտական կրթութիւն առած էր հօր-  
մէն . բայց երբոր տասնըութը տարուան  
եղաւ , խանութի սպասաւորի մը չար օ-  
րինակին հետեւելով՝ ու անոր ձեռքովը  
ծածուկ կարգալով անառակ գրքեր , բո-  
լորովին ասպականեցաւ տղուն վարքը : Ար-  
բոր իմացաւ Ֆէնհէյմ , որ ծառայն իր  
որդւոյն չար խրատներ կու տայ , ճամբայ  
դրաւ աս անարդ ասպականիչը . բայց ան-  
զգամութեան թոյնը ընկած էր մէյ մը պա-  
տանւոյն սիրտը , որն որ քիչ ատենէն գե-

րի եղաւ աս անօրէնին շար խրատներուն :  
Շատ փորձ փորձեց Յէնճէյմ դարձնել  
լու որդին աս կորստեան ճամբայէն , նախ  
երկար ատեն քաղցրութեամբ ջանաց , ետ  
քը խտութեան ձեռք զարկաւ , բայց ըն-  
դունայն ջանք :

Ահամայ կը համբերէր պատանին հօրը  
խնամոցը , հայրենի լուծ անուանելով , ու  
յարմար միջոցի մը կ'ըսպատէր ազատելու  
անկէց : Ա' երջապէս օր մը յաջող դէպ մը  
ունենալով՝ եղաւ փախաւ թշուառը հօրը  
տունէն , որ ամենին չյայտնուեցաւ ինչ  
ըլլալը : Շատ տարիներ անցիր էին ու  
խեղճ հայրը ամէն կարելի եղած ջանքը ը-  
նելէն վերջը՝ որդին գտնելու համար , լուսն ,  
կորսուած սեպելով տղան : Սակայն ամէն  
անգամ որ տղուն վրայ խօսք կ'ըլլար չէր  
դադրեր արցունք թափելէն , ու սրտին  
վէրքը՝ աս անառակ տղուն աներևոյթ ըլ-  
լալուն վրայ՝ ոչ երբէք կ'առողջանար :

— Ա՛հ , կ'ըսէր սեղանին վրայ , աւելի  
սիրով կը համբերէի տտացուածոցս կորու-  
սեանը վրայ , միայն թէ տղաս մէկը ինձի  
դարձնէր : Յօժարութեամբ կը նուիրէի  
հարստութիւնս , թէ որ կարելի ըլլար քովս

պահել որդիս՝ հսկելով իր երխտասարդ հասակին վրայ, ուղղելով զինքը առաքինութեան ճամբուն մէջ: Ափսոս, այսչափ տարի մեզմէ հեռու ինչ կ'ընէ արդեօք. առանց առաջնորդի, առանց խորհրդոյ, թողուցած ինքզինքը չար յօժարութիւններուն ետեւն. ո՞ր գիտէ ինչ մտորութեանց մէջ կը տասլըտարկի՝ հաւատքը, կրօնքը որացած, պատիւը ոտքի տակ առած, հոգին կորսնցընելով հօրը անունն ալ կ'աւրէ: Աս տարսափը գիշեր ցորեկ մտքէս չեղեր, ու կը դառնացընէ իմ կեանքս: Ահ, ինչու չեն ուզեր որդիք խմանալ իրենց ճողացը սէրը. այսչափ անգութ չէին ըլլար թերեւս, ու այսպէս սոսկալի ցաւեր չէին պատճառեր իրենց մտորելովը: Աս խօսքերս կը զրուցէր, ու յորդ արցունք կը թափէր:

Վաղտէն դարձուց խօսքը, ու հօրութեան ելաւ եփել տուած կարկանդակը բերաւ՝ դրաւ սեղանին վրայ, երկու գեղեցիկ տասպաններու մէջ տեղը՝ որոնց մէկուն մէջ կեռաս կար, մէկալին տանձ: Տղաքը որ ինչուան ան ատենը լուս կեցեր էին՝ սկսան խօսիլ, և ուրախութիւննին աւել

յաւ տեսնալով գեղեցիկ տանձերը , որ աս  
տարուանս առջի ժողլած խայրիքն էին .  
Տորոթէան՝ գեղեցիկներէն ընարեց ու իր  
ազգականացը հրամցուց : Ֆէնհէյմ տես-  
նելով տանձերը շիրցաւ ծածկել ունեցած  
զգածմունքը , ու սկսաւ ժպտիլ . Ազնէս  
ու աղջիկը խնայան իր մտածմունքը , վասն  
զի ամէն անգամ որ սեղանի վրայ տանձ  
տեսնէր աս պատուական մարդը՝ կը խօ-  
սէր Սիեկէրի վրայ :

Վալտէն աղաչեց որ պատմէ տղոցը  
աս պատմութիւնը՝ որ չէին գիտէր , որ-  
պէս զի իրենց բարի օրինակ մը ըլլայ յար-  
գութեան ու երախտագիտութեան . Ֆէն-  
հէյմ հաւանեցաւ իրենց փափաքին , ու  
սկսաւ այսպէս իր պատմութիւնը :

— Իմ շատ ճամբորդութեանցս մէջ ,  
որ ատենօք կ'ընէի վաճառականութեանս  
պատճառաւ , օր մը հասայ մէկ աղուոր  
ձոր մը՝ որ կը հանէր ան գործարանը՝ ուր  
այլ և այլ բաներ պիտի ապսպրէի : Առջի  
անգամն էր որ աս ձորս եկեր էի . ուստի  
կը կարծէի որ գանամ հոն գեղեր , ու  
պանդոկներ . բայց խարուեցայ : Շատ  
փարսախ ճամբայ ըրեր էի , ու տաքը կը

նեղէր զիս , և սաստիկ ծարաւ մը ունէի ,  
 ծարաւս անցընելու բան մը չունենալով  
 հոն : Սակայն կրցածիս չափ կը ջանայի  
 ճամբաս առաջ տանիլ . մէյ մ'ալ տղայ մը  
 տեսայ՝ որ անտառէն կ'ելէր , գլխին վրայ  
 տանելով խուրձ մը փայտ , ու մէկ ձեռքը  
 գեղեցիկ տանձ մը : Անցայ դիտելու աս  
 գեղեցիկ տղան . — Բսէ ինձի բարեկամ ,  
 հարցուցի իրեն , տանձդ կ'ուզես ծախել  
 ինձի . ծարաւէս կը մեռնիմ կոր , ու կը  
 վախեմ թէ պիտի չհանդրալիմ՝ պանդոկի  
 մը , ուստի կ'ուզիմ քիչ մը զովանալ . ան  
 աս քառասնոց դրամը թէ որ ուզես տան  
 ձը տալ : — Պարոն , ըսաւ տղան , ես աս  
 տանձէս ուրիշ բան չունիմ , ան ալ հօրա  
 քոյրս տուաւ ինձի որ գաւցեր էի տունը ,  
 վարը աս լեռան ետեր . ու տեսնալով որ  
 գեղեցիկ է տանձը՝ ուզեցի մօրս տանիլ .  
 բայց որովհետեւ սաստիկ ծարուած եմ կ'ը  
 սէք՝ ահա կու տամ ձեզի : — Դու բարի  
 տղայ մը կ'երեւաս , ըսի իրեն , որ այսպէս  
 մայրդ կը հոգաս . Եհա քառասնոցը որ  
 անշուշտ իրեն աւելի հաճոյական է քան  
 աս տանձը :

— Ա՛հ , Պարոն , ըսաւ տղան , պա

հէ ստակդ , աս ողորմելի տանձը այնչափ  
գնով ծախելը մեղք է . հրամայէք կերէք  
տանձը՝ ու զովայէք : Այն պատուը ու  
կերայ , զարմանալով տղուն անմեղ պար-  
զութեանը ու ազնուութեանը վրայ . շատ  
մը բաներ հարցուցի ծնողացը վրայօք , ի-  
րենց վիճակին ու բաղդին , և խնայայ որ  
հայրը աղքատ վարձուոր է եղեր՝ աղոց  
տէր մարդ , անունը (Թոմաս Սիեկէր , և  
կը բնակէր Սալթէ ըսուած գեղը : Այ-  
սամէնը գրեցի տեսարակիս մէջ . կեցիք բա-  
րով ըսի տղուն , խոստանալով երկրորդ  
օրը երթալու տեսնելու իր ծնողքը :

Ճամբաս առաջ կ'երթայի մտածելով  
թէ ինչ կրնամ ընել աս ազնուամիտ տը-  
ղուն , ու մէկէն միտքս եկաւ քովս առնել  
զինքը , սորվեցընել ու կրթել վաճառա-  
կանութեան մէջ . վասն զի իրեն տուած  
պատասխանները յայտնի ըրին որ խելացի  
ու սուր մտքով տղայ մին է , ու թէ որ  
երթալով իր մտքին կարողութիւնները կա-  
տարեղագործութիւն , օր մը երեւելի մարդ  
կ'ըլլայ . ուստի հաստատուեցայ խորհր-  
դոյս մէջ :

Երկրորդ առաւօտը գացի գտնելու

Ագրիանոսի ծնողքը , ու հոն տեղեկացայ  
թէ ինչ որ ըսաւ ամէնն ալ շիսակ են ե-  
ղեր : Հարցուցի տղուն հօրը թէ Ագրիա-  
նոսը կ'ուզէ՞ յանձնել ինձի , խոստանալով  
հոգալու ինչպէս թէ որդիս ըլլար , կրթե-  
լու զինքը քրիստոնէութեան մէջ , սորիւ-  
ցնելու փաճառականութիւն . ու իրեն ա-  
պահով վիճակ մը ձարելու : Հայրը խրնդ-  
րեց ինձմէ ութը օր՝ մտածելու առ բանիս  
փայօք , ու հարկաւոր տեղեկութիւններ  
առնելու : Աս խնդիրքս շատ իրաւացի ե-  
րևցաւ ինձի , որովհետեւ առ մարդս ամե-  
նեկն չէր ձանձնար զիս , ուստի իրաւունք  
ունէր տեղեկանալու նախ թէ ինչ մարդ  
եմ . որպէս զի ապահով ըլլայ թէ որդին  
չկ'յնայ պիտի ամբարշտի մը ձեռք՝ որ կրը-  
նար զինքը կերօքնցնել :

Ութը օրէն վերջը՝ բերաւ տղան , ըսե-  
լով թէ ինչպէս որ տեղեկացայ հրամանը  
ներնուզ վրայօքը , շատ ուրախութեամբ  
ամենեկն առանց տօրակուսի կը յանձնեմ  
ձեզի տղաս : Ուստի Ագրիանոսը մնաց  
ինձի հետ , ու շատ ուրախացայ որ այս-  
պէս լաւ բանի մը ձեռք զարկի : Վարդոյ  
խրկեցի զինքը , ուր քիչ ատենուան մէջ



իր կատարելութիւնները յայտնի ըլլալով՝  
առջինը եղաւ իր դասին մէջ : Հաստ ա-  
տեն շանցաւ առջի իր հաղորդութիւնը ա-  
ռաւ . ու դարձացուց ամէնքը իրեն հրեշ-  
տակական բարեպաշտութեանը վրայ : Իր  
բարի վարքովը հանդերձ իրեն հալատակու-  
թեամբը՝ շատ սիրելի եղաւ ինծի , և կա-  
մայ կամայ կը սորվեցնէի իրեն վա-  
ճառականութեանս վարպետութիւնները :  
Հաստ անգամ կը բաղդատէի իր փոյժը ,  
հաւատարմութիւնը ու ճշդութիւնը սարտ-  
քերուն մէջ , որդւոյս անհոգութեանը ու  
անկարգութեանցը հետ , ու միշտ կը փա-  
փաքէի որ որդիս ալ անոր նախանձաւոր  
ըլլար :

Ազրիանոս մեծամեծ ծառայութիւննե-  
րբաւ ինծի , ու երբոր կը մտածէի հաս-  
տատելու զինքը որոշ վիճակի մը մէջ ,  
յանկարծ ինծի բարեկամ վաճառական-  
ներէն մէկը խնդրեց օր մը՝ օգնական սա-  
տանի մը , որուն կարենայ վստահիլ բոլոր  
գործքը իր երկայն ճանքորդութեանցը մի-  
ջոյր , որ ստիպուած էր ընելու : Աստե-  
ցայ Ազրիանոսի վրայօքը՝ որ շատ անգամ  
տեսեր էր իմ քուխ : Հաստ ուրախացաւ

լսելով թէ աս զգօն ու գործունեայ պատանին իրեն կ'ուզեմ տալ . թէպէտ ինծի խիստ ծանր էր բաժնուիլ աշակերտէս , բայց սակայն խօսք տուի՝ գիտնալով որ աս նոր վիճակին մէջ Ազրիանոս աւելի կրնայ առաջ երթալ՝ քան իմ քույս . ինչպէս որ շխարհուեցայ ալ :

Վ ամառականը շուտ մը ճանչցաւ իր նոր օգնականին գեղեցիկ բնաւորութիւնները , ու ինչպէս թէ իր որդին ըլլար այնպէս սիրեց զինքը . տարի մը ծառայութեանէն վերջը՝ բոլոր իր բաներուն հոգը իրեն յանձնելով բոլորովին անոր վստահացաւ : Ազրիանոս իր տիրոջը վստահութեանը համեմատ հաւատարմութիւն ցրցուց , ու այնպէս աչքը մտաւ որ իր մէկ հատիկ աղջկանը հետ զինքը կարգեց : Քիչ մը ատենէ ետքը մեռաւ վաճառականը՝ իր փեսին շատ հարստութիւն թողլով . բայց այս բարեբաղդ ամուսնութիւնը երկայն չտևեց , վասն զի տասնութը ամիսէն վերջը մեռաւ նոր հարսն ալ , որուն պատճառ եղաւ անգամ մը դժբաղդութեամբ սահելով իյնալը : Այսպէս Ազրիանոս աւեր եղաւ այնչափ հարստութեանց , ու ինչուան

Հիմա մեծ խոհեմութեամբ կը տնտեսէ ու տարուէ տարի շատցընելու վրայ է :

Ահա սիրելի տղաք, Ազրիանոսի պատմութիւնը, որուն երջանկութեանը տանձ մը պատճառ եղաւ : Ա՛հ, անշուշտ գիտեմ, ըսաւ Ֆէնհէյմ, թէ որ Ազրիանոս խմանար իմ խեղճութիւնս՝ օգնութիւն կը վազէր ինձի մէկէն . ազնուական սիրտ մը ունի որ առանց կարեկցութեան չժողուր աս թշուառութեանը մէջ իրեն երջանկութեան պատճառը :

Աս վերջի խօսքը՝ Վալտէին սաստիկ դպաւ ու սկսաւ մտածել . և քանի մը վայրկեան լռութենէն վերջը՝ մէյ մըն ալ յանկարծ ելաւ սեղանէն, մօտիկցաւ իր ազգականին քուլը, ձեռքը բռնելով ըսաւ .  
— Սիրելի բարեկամ, Աստուած միտքս խորհուրդ մը ձգեց, որ սէտք է յայտնեմ քեզի . Ազրիանոս Սիեկէր իր ունեցած վիճակին վրայօք քեզի պարտական է, վասն զի Աստուծմէ վերջը՝ դու ես իր երջանկութեան պատճառը : Կը ճանչնամ իր բարի սիրտը ու սէրը որ ունի քու վրայ, ուրիշ մարդկանց չնմանիր որ կը մոռնան իրենց եղած ծառայութիւնը, ու ապերախտու-

Թեամբ մը չեն ուզեր ճանչնալ զանոնք ու  
րոնց պարտաւոր են : Ա' երթամ իրեն ու  
քու վիճակդ կը յայտնեմ . վասն զի քու  
հասակդ չժողուր քեզի աս ճամբորդու  
թիւնը ընելու . բայց ես որ ուժս տեղն է ,  
ու բոլորովին առողջ եմ , կրնամ ընելու աս  
պղտի ճամբորդութիւնս : Այս իրիկուն կ'եր  
թամ գիւղապետին , ու տանըհինգ օրուան  
համար հրաման կ'առնում . յուսամ որ չէ  
չլսիր , ու վաղը ճամբայ կ'եղամ Աղբիա  
նոսին երթալու . ո՞ր գիտէ թէ աս տան  
ձր քեզի երջանակութիւն մը չտերէ : Ֆէն  
հէյմ , սաստիկ սիրար շարժելով ազգա  
կանին աս սրատրաստականութեանը վրայ ,  
քզեց ընդդիմութիւններ հանել , բայց  
Ապրտէ հաստատուն կենալով իր մտքին  
վրայ , առաւ խոյրը և վաւազանը ու ելաւ  
զնայ քաղաքը :



ԳԼՈՒԽ Դ

Ճամբորդութիւն .

ԱՆՏԷ դիւրաւ հրամանն առաւ քաղաքապետէն իր ճամբորդութեանը համար. Ֆէնհէյսի գլխուն եկած դժբաղդութիւնը խիստ մեծ էր, ուստի անոր համար ալ այսպիսի իրաւացի խնդիրքի մը դէմ արգելք չերաւ : Անձ ուրախութեամբ Ա ալ տէ՛ որ տասներհինգ օրուան համար ճամբորդութեան հրամանն առաւ՝ տուն դարձաւ շուտ մը, ու խնայուց թէ երկրորդ օրը ճամբայ կ'ելլայ ամապարելով կարգի դնել իր ազգականին բաները : Այս ինչպէս որ խոստացաւ առաւօտը ելաւ կանուխ, պզտի կապոց մը ըրաւ իրեն հարկաւոր եղած բաները . ըրաւ նախաձաշիկը, առաւ ձեռքը դաւազանը, միջքը կապեց իր պրզտի սուրը . և տունէն ելաւ երկու ընտանեաց բարեմաղթութիւնը ու օրհնէնքը առնելով : Տարոթէա իր կինը տեսնելով որ

իրիկունքը կ'երթար վախճալով որ չողայ թէ  
դժբաղդութիւն մը հանդրալի իրեն ճամ-  
բորդութեանը մէջ, կը նայէր ու կու լար :  
Իսկ Վ ալտէն կ'ապահովեցնէր զինքը ըսե-  
լով, Մատուած կ'առաջնորդէ ճամբուս,  
ամենեին իր պահպանութեանը ապաւի-  
ներ եւ, որովհետեւ եղբայրսիրութեան  
գործք մըն է ըրածս, ուստի մի լար .  
տասնըհինգ օրէն կը դառնամ, ու տես-  
նես որ բարի բարի լուրեր պիտի բերեմ .  
տղոցդ աղօթք ընել տուր ամէն օր ինձի  
համար որ Մատուած վտանգներէ պահէ  
զեւ . վասն զի կը լսէ Մատուած անմեղայ  
աղօթքին :

Յէնհէյմ ինչուան ճամբուն ծայրը իր  
հետը գնաց՝ երկար ատեն խօսելով մէկ  
տեղ . վերջապէս բաժնուեցան երկու բա-  
րեկամներ մէկ մէկէ, աչքերնին արցունքով  
լեցուած :

Վ ալտէն արշալուսին՝ դեռ արեւ չկած  
հասաւ քաղաքին դուռը, ու գէպ ի հրո-  
գեհած տեղը սկսաւ երթալ . տեսաւ հոն  
կրակին ըրած աւերմունքները, որ ամբողջ  
թաղ մը բոլորովին այրեր ու աւերակ դար-  
ձուցեր էր . սրտերը կէս մը փրկւած՝ ու

ծխէն սւցած , մոխիրի կոյտերը , խեղճ  
ողորմելի տեսարան մը : Արբոր կ'անցնէր  
ՖէնՏէյլի տանը աւերակին դիմացէն .  
այնպէս աս տեսարանովը սիրտը տակնու  
վրայ եղաւ որ սկսաւ արցունք թափել .  
— Ո՛հ , ըսաւ ինքիրմէն , թէ որ Աս-  
տուած կամենայ տարիէ մը կը տեսնենք  
աս տունս՝ թէ ոչ բոլորովին շինուած ,  
գոնէ շինուելու վրայ . որպէս զի խեղճ  
ազգականս գլուխը խոթելու տեղ մը գրտ-  
նէ : Աս քաղցր յուսով՝ սիրտ առած Վալ-  
տէ այնպէս փութով կը շարունակէր ճամ-  
բան , որ վեցերորդ օրը հասաւ իրիկուան  
գէման քաղաքը՝ ուր կը բնակէր Ագրիա-  
նոս Աիեկէր . որն որ իմացեր էր օրագիր-  
ներէն ՖէնՏէյլին գլխուն հասած գրժ-  
բաղղուծիւնը , և սլատրաստուեր էր թրղ-  
ծով մը հրախրելու զինքը որ գայ իր քովը  
բնակի հանգերձ ընտանեօք :

Ագրիանոս զՎալտէն տեսածին պէս՝  
սկսաւ լալ , ու սլատմեց իր սլարտքերը որ  
ունէր իրեն հին բարերարին : Մեծ յան-  
ցանք է , կ'ըսէր , թողուլ անօգնական  
աս սլատուական ընտանիքը . քանի մը  
որ ինձի հետ կեցիր , ըսաւ , ու տեսնեմ

ինչ բան կրնամ ընել հիմակու հիմա .  
վասն զի Արեւիկէր այրի ըլլալով կը փափա-  
քէր՝ որ Ֆէնհէյմ գայ իր տունը բնակի .  
բայց երբոր Ա ալտէն ըսաւ , թէ մեծ միշտ  
կըլլար իրեն թողուլ իր ծնած քաղաքը՝  
դէմ չկեցաւ Արեւիկէր :

Ա ալտէ մեծ սխալիւ գտնելով Ագրիա-  
նոսէն , հանդիպեցաւ ճամբուն աշխատան-  
քէն . շատ անգամ խօսքը ընկաւ Ֆէն-  
հէյմին ու իր որդւոյն վրայ , որն որ բոլը-  
մին կորսուած կը կարծուէր : Արեւիկէր  
միշտ իր բարեկամին մշտին ցաւակից եղեր  
էր , ինչուան կ'ըսէր թէ հարստութեանս  
կէսը կու տամ , թէ որ կարելի ըլլայ բերել  
տալ աս տղան իր ծնողացը քով : Ա երջա-  
պէս հասաւ օրը որ Ա ալտէ ետ դառնալու  
էր . տարաւ զինքը Արեւիկէր իր սենեակը  
ու ըսաւ . — Ահա սիրելիդ իմ Ա ալտէ ,  
թողի՛մ մը քսան հազար Ֆրանքի , որ սե-  
ղանաւորաց տոմսակով կը խրկեմ Ֆէն-  
հէյմին : Իմ խորհուրդս աս է , որ փոխա-  
նակ տունը շինելու , որ երկար ատեն կը  
քչէ , եղածին ու ժամանակին յարմար  
տուն մը գնէ . որպէս զի շուտ մը սկսի իր  
փաճառականութիւնը : Առտամ ես աս



գումարս իբրև փոքր նշան մը երախտադի-  
տութեան՝ իրեն ինծի բրած այնչափ բա-  
րեայր փոխարէն . իսկ թէ որ ուրիշ բանի  
ալ կարօտութիւն ունենայ , սրատրաստ եմ  
միշտ օգնելու : Ա՛ս սա սղտի յիշատակն  
ալ դրամոց գումարին հետ . աս ոսկիէ  
տանձը որ կը տեսնես՝ շատ տարի է որ շի-  
նել տուեր եմ , որպէս զի յիշեմ միշտ թէ  
տանձ մին է եղեր իմ երջանկութեանս  
սրատճառը : Տուր աս ոսկետանձը իմ հայ-  
րազրիս ամուսնոյն որ սրահէ , աս մասնին  
ալ Յուսափնէին տուր . ըսէ՛ Քէնհէյմին ,  
որ իր անունը անջնջելի գրեցաւ սրտիս մէջ  
գրուած է , ու ոչ երբէք պիտի մոռնամ  
ինծի բրած բարիքները : Հիմակու հիմա  
չեմ կրնար տեսնել նորէն աս իմ սրատուա-  
կան հայրս , յայտնելու իրեն սրտիս զգաց-  
մունքները որ ունիմ միշտ վրան . իսկ քե-  
զի առաքինի Ալլաթէ , որ աս ճամբոր-  
դութիւնս յանձն առեր ես Քէնհէյմի հա-  
մար , կու տամ այս փոքր նուէրս իբրև  
ճամբու ծախք . և տուաւ իրեն սղտի կծիկ  
մը քսան լուիզ ոսկի փաթթած :

Ալլաթէ շնորհակալ եղաւ ազնուամիտ  
Ազրիամուսին ընծաներուն . առաւ ամէնը ,

դրաւ դրսմանը , ու պագտուելով Ագրիա-  
նոսին հետ ուզեց բաժնուիլ : Իսկ Ագրիա-  
նոս տարաւ զինքը գաւիթը՝ ուր գեղեցիկ  
ձի մը կապուած էր . աս ձին Վալտէին  
տուաւ ճամբայ ընելու համար , և պահէ  
ըսաւ ինչուան որ ուզեմ նորէն : Բարե-  
օիրտ Վալտէն կը զարմանար Ագրիանոսի  
բրաժներուն վրայ , ու աչքերէն արցունքը  
կը թափէր : Սիրով Ագրիանոսին ձեռքը  
բռնած՝ վերջի բարեւր տուաւ , ու ձին հեծ-  
նելով ճամբայ ելաւ ուրախութեամբ . որ  
այսպէս աղէկ լուրեր պիտի տանի իր վըշ-  
տացեալ ազգականներուն : Ար մտածէր  
ճամբան Ագրիանոսին տուած խրատին  
վրայօք , ու իրեն ալ աղէկ երեցաւ որ  
Ֆէնհէյմ փոխանակ իր տունը նորէն  
շինելու՝ ուրիշ մը գնէ , ու առանց ժա-  
մանակ կորսընցնելու վաճառականութեա-  
նը ձեռք զարնելով իր բաները կարգի  
դնէ : Շնորհակալ եղաւ Աստուծոյ որ  
Ագրիանոսի միտքը այսպիսի օգտակար  
խորհուրդներ ձգեց . կը մտրակէր ձին  
շտապելով ճամբան :

## ԳԼՈՒԽ Ե

Անակնկալ դիպրուած .

ԱՆՏԷ անցեր էր կէս ճամբանս երբոր երրորդ օրը իրիկուան դէմ հասաւ զեղեցիկ անտառի մը բերան , միտքը դնելով որ անտառին ծայրը երեցած գեղը գիշերը անցնէ . կը մտածէր իր կինը՝ տղաքը , ու Ֆէնհէյմը . ու կ'երեակայէր թէ ինչ պիտի ուրախութեանս պատճառ պիտի ըլլար իր գարձը : Ճամբանս խորտուբորդ էր , զանազան ելևէջքներով , տեղ տեղ նեղ ու տեղ տեղ լայն . ասդին անդին մեծամեծ կաղնիներ ճիւղերնին տարածած բարձրաւանդակին վրայ ինչպէս շարժական կամար մը ճամբորդներուն գլխուն . մէկալ կողմանէ մոխրագոյն ժայռեր աշտարակի պէս տնկուած՝ կարծես թէ կ'սպառնային իրենց տակը ձգմել աս տեղէն անցնող ճամբ

բորդները : Մողէսները ժայռերէն ներս  
կը մտնային արեգական ինջնալուր . հոն  
սկիւռ կենդանիները ճիւղէ ճիւղ կը ցաթ  
կէին դեռ իրենց լոռաշէն բոյներնին չբա-  
շուած . հեռուէն աղանիի վու վու մնչելու  
ձայնը կու գար , ու անտառի երգիչները կը  
հնչեցընէին իրենց սուր ու զուարթ եր-  
գերը :

Վալտէ բնութեան գեղեցկութեամբը  
զուարճացած կ'զմայլէր աս գեղեցիկ տե-  
սարանուխ . մէյ մըն ալ յանկարծ լսեց  
բազմութեան մարդկանց ձայն մը , որ կ'ել-  
լէր թանձր անտառին մէջէն : Աւժով մը  
մտրակից ձին վտանքէն խարսելու , բայց  
հրաձան մը պարսպուելով ձիուն վրայ՝ ան-  
կօրիկ եղաւ իրեն առաջ երթալ , վասն  
զի ձին վիրաւորուած կանկ առաւ . ու  
հոն մէկէն ութը զինեալ աւազակներ յար-  
ձակեցան վրան՝ քաշեցին զինքը ձիովը ,  
տարին անձաւ մը ուր որ հաստատած  
էին իրենց բնակութեան որջը : Աս սա-  
տանայի նման մարդիկը ժողջուեցան խեղճ  
Վալտէին վրայ , ձեռքերը կտուր կապե-  
ցին , ու սկսան վրան փնտռել . հանե-  
ցին թղթոց պահարանը ուր էր փոխա-

նակագիրը , ոսկի տանձը , մատնին , իր  
ժամացոյցը , ունեցած դրամը . գտան  
նաև Աիեկէրի՝ Ֆէնհէյովն խրկած թուղ-  
թը :

Ըս թղթին հասցէն տեսնելով աւազա-  
կապետը թալկացած սխաւ դողդըղալ .  
զարմանքով մը նայեցաւ Ալալտէի վրայ ու  
հառաչեց : Ահկալ աւազակները տեսնն աս  
իր այլայլութիւնը , ու չէին գիտէր թէ ի՞նչ  
կը նշանակէր . — Օչուցէ ինձի , ըսաւ  
աւազակապետը Ալալտէին , կը խնայենք  
կեանքիդ թէ որ ընես ուսկից կու գաս ,  
ո՞ւր կ'երթաս . ի՞նչ կը նշանակէ այս տան-  
ձը , մատնին ու տոմսակներու կապոցը :  
Հուսալով Ալալտէ շարժել աս անողգամնե-  
րուն սիրտը , սլատմեց եղածը , ու իր ճամ-  
բորդութեան վախճանը : Իր սլատմութիւ-  
նը՝ որուն մէջ տեղ տեղ խրատներ ալ կը  
խառնէր , կ'երևար թէ ազդեցութիւն մը  
ըրաւ աւազակներուն . բայց այս ազդեցու-  
թիւնը քիչ տևեց , սաստիկ խտտացիր էր  
սրտիրնին չարութեանց մէջ , ու անկարելի  
էր առաքինի Ալալտէին ազնուական խը-  
րատներովը կակըղնալ :

Ինչոյ աւազակապետը խելքը գլխէն

կորսնցուցած՝ բոլոր մարմնով կը դողդըղար, ու ծառի մը կոճղին կը թնամ, գետինը նայելով տխրութեամբ լուռ կը կենար: Ա երջասկէս սաստիկ լաց մը ըսկըսաւ, ու մեծ հառաչանքով կանչեց:

— Ըն ամէն բանը՝ որ ըսցիք բարեկամներ, աս առաքինի մարդուն բերնէն, իմ հօրս վրայ է. Մ'ի Տէր Աստուած, ինչ կ'ընեմ ես ծնողքէս հեռացած, անօրէնութեանց մէջ կ'անցընեմ օրերս. հայրս խեղճութեան մէջ ընկեր է, որդի մը ունի որ իրեն ամենեին օգնութիւն չըներ և աս հաստար մը օգնութիւն կը խրկէ հաստատելու զինքը իր բանին գործքին մէջ: Մ'ի շարագործութեանցս ընկերներ, սպաննեցէք զիս, կամ թողուցէք երթալ հօրս գիրկը իյնալ՝ որ թողութիւն տայ, և կարենամ ասկէց վերջը իրեն օգնական ըլլալ: Ըս մարդս՝ որ բռներ ենք, իմ ազգականս է՝ լաւ կը ճանչնամ զինքը, թէպէտ ինքը թերևս զիս չի ճանչնայ ամենեին:

Թողուցէք զիս որ հետը երթամ, չեմ կրնար ալ ձեզի հետ կենալ. աս անօրէն կեանքս՝ որ քիչ մը առաջ կը սիրէի, ասեւի է ինձի աս վայրկենիս մէջ որ միտքս

դրի ալ վերջ տալու : Աարծեմ թէ ասլա  
հոլ ճամբան աս է , բաժնուինք մէկ մէ  
կէ . քանի մը օր է որ աս տեղս եկեր  
ենք , ու քանի մը աւազակութիւն դեռ  
ըրինք . ու ետեւէ են զմեզ բռնելու :

Քակենք աս գարշելի միաբանութեան  
կապը որով միացանք . իւրաքանչիւրը ջա  
նայ Աստուծոյ հետ հաշտուելու . ամէնք  
նիս ալ յանցաւոր ենք՝ դառնանք առաքի  
նութեան ճամբան : Թողունք ալ աս  
կեանքս՝ որ վերջապէս օր մը շղթայի ու  
կախաղանի զմեզ պիտի մատնէ . կարճու  
թեամբ մերժենք թողունք աս անզգամու  
թիւնը , որ մեր կորստեանը համար սա  
տանան միտքերնիս ձգեց : Մեր տղայու  
թեան կրօնքը կ'ընդունի զմեզ նորէն իր  
գիրկը , կը ներէ Աստուած ալ մեր մե  
ղացը :

Աս խօսքերէս վերջը՝ որ բարկութեամբ  
մտիկ ըրին աւազակները , ահագին խոռ  
վութիւն մը ելաւ , ու կատաղած աւազակ  
ները բացին սուրբնին , ու սպառնալով  
իրենց մեծին Ժողովեցան չթողու զինքը՝ որ  
երթայ . և ահագին գոռում գոչում կը  
նէին : Ասոնց ընկերութիւնը սատանանէ

րու ժողով մը կը նմանէր , ամէնը մէկ  
բերան կը պոռային , կը հայհոյէին , կ'ա-  
նիծէին աւազակապետը , ու ծարաւի կ'ե-  
րեային չարագործութեան :

Վալտէ արձանի մը պէս անշարժ մնա-  
ցած էր չղիտնալով թէ ինչ պիտի գայ  
ղիտուն . սարսափած էր՝ որ չըլլայ թէ ա-  
ւազակները վրան վազեն փարատելու զին-  
քը՝ որ աս շիտթութեանս պատճառ եղաւ  
անոնց : Աւտի հոգին Աստուծոյ յանձ-  
նելով կ'ըստատէր մահու . և կինը ու տը-  
ղաքը միտքը բերելով վախով մը կը դողար  
սիրտը : Թէպէտ խղճմտանքը մաքուր էր  
որ և իցէ ծանր մեղքէ , բայց կը վախէր  
դարձեալ այսպէս անպատրաստ առանց  
սուրբ խորհրդոյ՝ Աստուծոյ դիմացը ել-  
լալ : — Ո՛վ Աստուած բարերար , կ'ըսէր  
սրտէն , աս քու կամքդ է՝ որ ես մեռնիմ  
հոս չարագործներուն մէջ , ողորմէ հոգ-  
ւոյս , ու մեղացս նայելով մի դատեր  
զիս . օգնէ իմ կնոջս և որդւոյս , ու իմ  
մահս փրկաւեա ըրէ աս չարագործներուն  
որ մտցեր են գրեց :

Հանկարծ աւազակներէն մէկը նշան  
բրաւ որ թողու երթայ . Վալտէ իբրև



հրաշքով մը աս անօրէն մարդկանցմէ ազատած՝ մէկէն հեռացաւ անկէց, ըստիպուելով թողուլ հոն ամէն ունեցածը՝ որ յափշտակեցին : Արբոր ճամբայ ելաւ, կեցաւ քիչ մը, լսեց աւազակներուն աղաղակը՝ որ երթալով կը բարձրացնէին խիտ անտառին մէջ : Իսկ ինքը Աստուծոյ շնորհակալ ըլլալով՝ որ ազատեց զինքը աս վտանգէն, սկսաւ երթալ ան գեղը ուր որ միտքը դրեր էր գիշերը անցընել : Օրնկուրները սաստիկ կտրած չէր կրնար ուտուրները շարժել, այսպէս խոռովեր էր գլխուն եկած թշուառութենէն, կ'երևար իրեն որ բոլոր անդամները կտտրեր են, ու սաստիկ հողմած դադրած հասաւ գեղը : Հոն թշուառութիւն մ'ալ վրայ եկաւ, դեռ պանդուկը չմտած նայեցաւ գրպանը որ աւազակները մէկ սլզտի դրամ մ'ալ չեն թողուցած, ուստի անկողին վարձելու և իրիկուան քիչ մը կերակուր ուտելու ստակ չունենալով, ստիպուեցաւ խնդրել մէկէն մէկալէն որ ան գիշեր զինքը իրենց տունը ընդունին : Պատմեց զլսուն եկածը, ու աս գեղիս առարկինի բնակիչքը ճանչցան երեսի գեղնութենէն ու շարժ-

մունքէն՝ որ սուտ չէ ըսածները . ընդու-  
նեցան տուն մը , ուր կերաւ ու սլառկե-  
ցաւ , շնորհալ ըլլալով ան առաքինի հեր-  
կազործին որ ընդունեց զինքը :



## ԳԼՈՒԽ Զ

### Դարձ .

ՄՈՒԱԽՕՏԸ տեսնելով որ երէկուան վախը քիչ մը անցեր է , ճամբայ ընկաւ դարձեալ Վալտէն . արեւակը կըլիւ վրայ էր և աղուոր օր մը կը գուշակէր . ծառերուն քաղցր բուրմունքը , թռչնոց երգը , միջատներու բզզանքը ու դալար խոտերու վրայ թռչտիլը՝ կարծես թէ բարեկէ մին էր օրուան աստղը : Բնութեան այսպէս գուարթ ու զանազան գեղեցկութեանցը մէջ տխուր էր Վալտէ , կը շարունակէր ճամբան գոհ ըլլալով որ բարի գործքի ձեռք զարկաւ , ու Մստուծոյ կը յանձնէր իր թշուառ բարեկամին բանը : Արբեմն կամաց երբեմն ալ փութով կը քալէր , հաճութեամբ մը առաւօտեան քաղցր օդը ծծելով՝ կ'անցնէր զով ու հովանաւոր տեղերէն , բոլորովին իր դարձին միայրը

տուած , ամենին բնութեան զուարճու-  
թեանցը ուշ չգնելով՝ որ մեծ բերկրութիւն  
է ճամբորդի , ինչպէս ինքն ալ առաջ Աղ-  
բիանոսի երթալու ատեն՝ հոսկէց անցնե-  
լու ժամանակ ունեցիր էր :

Ճամբուն վրայ տուն մը կը հանդըստէր ,  
կը մտնէր Ա շառէն հայ խնդրելու . ո՛հ ,  
նրչափ դժուարը կու գար տեսնելով ինք-  
զինքը բանադատուած մուրալով ասրելու  
շատ օրեր : Բայց խիստ շատ ալ չվշտա-  
նալով ինք իրեն աս խոնարհութեանը մէջ  
օգտակար խրատներ կը հանէր : Ամէն ան-  
գամուն որ անտատի մը մէջէն կ'անցնէր  
վախը կ'առնէր սիրտը , ու ծառերու տերե-  
ներու իյնալու ձայնը իրեն նոր թշուա-  
ռութեան լուր մը կ'երևնար , որն որ շատ  
անգամ անտատներու մէջէն ճամբորդու-  
թիւն ըրած ըլլալով , կ'ամչնար ալ աս վա-  
խուն վրայ :

Տունը հասնելէն օր մը առաջ ստի-  
պուեցաւ իրիկունը անձրևի սլատճառաւ  
գեղ մը իջնալ՝ որ բաւական աղուոր կ'ե-  
րևնար . թէպէտ այնչափ ուշ չէր , ու կըր-  
նար դեռ քանի մը մղոն ալ ճամբայ կըտ-  
րել , բայց ճամբաներուն գէշութեանը

Համար անկարելի եղաւ իրեն առաջ քաշիլ :  
Հաս մը աներու դուռը դարկաւ խնդրե-  
լով իրիկուան բնակելու տեղ մը , բայց ա-  
մէնքը վորնտեցին՝ օտարական մարդու  
տեղ շենք խտար ըսելով . ինչուան կնիկ մը՝  
ամօթ է ըսաւ , քեզի պէս մարդուն դուռէ  
դուռ պտրտիլը , ուժի տեղն է կրնաս  
կեանքդ պահել :

Չուզելով Վալտէն աս կնկան հետ  
երկան խօսակցութեան մտնել , սկսաւ դէպ  
ի եկեղեցին երթալ՝ հոն դաւիթը նստեցաւ  
զիշերը անցնելու համար : Ժամ մը հոն  
սաստիկ վշտալի մտածմունքներու մէջ ըն-  
կաճ՝ անօթութենէն կը տանջուէր , մէյ  
մըն ալ տեսաւ որ երէցը կու գայ ժամին  
բանալիքները ձեռքը , աղօթք ընելու հա-  
մար : Ոտք ելաւ Վալտէ , ու բարեկց  
պատուական առաջնորդը , հարցուց իրեն  
թէ կրնամ հոս սրբութիւն սրբոցին առ-  
ջեր աղօթքս ընել . — Հրամանը ես , ըսաւ  
երէցը , քանի որ ես հոս եմ կրնաս կենալ :  
Ստաւ Վալտէն սուրբ Աստուածածնայ  
խորանին դիմացը չողեցաւ : Արէցը ժամի  
մը չափ աղօթքի կեցաւ , Վալտէն չեղաւ  
ժամէն ինչուան որ երէցը ելաւ դուռը դու

ցելու . ուստի գնաց նստելու առջի քարին  
վրայ : Աղօրմելով մը երէցը նայեցաւ վրան  
ու հարցուց՝ թէ — Ինչո՞ւ աս տեղս կը  
նստիս , գիշերը հո՞ս կ'ուզես անցնել :

— Աէտք եղաւ որ այսպէս ընեմ , ըսաւ  
խեղճ ճամբորդը , սլանդոկի մէջ անկողին  
մը վարձելու ստակ չունիմ . բոլոր գեղին  
մէջ չուզեց մէկը տեղ մը տալ , ես ալ մտա-  
ծեցի որ Մտուածոյ տանը դիմացէն աղէկ  
տեղ չիկայ , ուր գոնէ հանդիստ կրնամ  
պառկիլ : — Ա՛յ ես դու : Բայտե՛ս Այլ-  
տէն , իր անունը , ու իր բնակած գեղը .  
և կարճ կերպով մը պատմեց իր ճամ-  
բորդութեան պատմութիւնը , ու քանի  
մը օր առաջ դիտուն եկած թշուառու  
թիւնը : Արէցը որ մեծ մտադրութեամբ  
ականջ կը դնէր ճամբորդին պատմու-  
թեանը , շատ մը հարցմունքներ ըրաւ ի-  
րեն . որոնց ճիշդ պատասխանը տուաւ  
Այլտէ :

Այլ աս ամէն հարցմունքներէն վերջը ,  
ըսաւ երէցը , — Աւզեցի ասրահով ըլլալ  
խմանալ թէ իրաւցրնէ աս կողմերէն ես .  
և կը տեսնամ որ ամէն բան լաւ կը ճանչ-  
նաս , մարդիկը , տեղերը . ասով կրնամ

քեզի բնակութիւն տալ ժամատան միջ  
աս դիշեր : Ահաք է որ յայանեմ քեզի  
ժողովրդեանս զքեզ չընդունելուն խստու  
թեանը պատճառը . վասն զի շատ մը ա  
տեն է՝ որ բազմութիւն անօրէն , կեղ  
ծաւոր մարդկանց կու գան հիւրընկալու  
թիւն խնդրելով , գողութիւններ կ'ընեն ,  
և կը խռովեն հանդարտ ու խաղաղ բնա  
կիչները :

Արտեանես հիմա թէ ինչպէս իրաւունք  
ունին զգուշանալու : Աս անզգամութիւնն  
է ահա որ հաւատացելոց սիրոյ պաղու  
թեանս պատճառ եղեր է . անմեղը խստնե  
լով յանցաւորին հետ՝ սրտերը կը խստա  
նան . որովհետեւ աշխարհքիս միջ չարա  
գործները շատ են : Այլն ինձի հետ իմ  
բնակարանս . չըլլայ որ հովիւն ալ իր ոչ  
խարներուն նմանի չընդունելով ան մար  
դը՝ որ այսպէս անշահախնդրութեամբ  
ինքզինքը նուիրեր է թշուառացեալ իր  
եղբորը համար :

Աւագերէցին ետեւէն գնաց Ապրտէ  
ժամատունը . ու հոն ականատես եղաւ աս  
պատուական հովուին առաքինութեանցը ,  
ու տանը անմեղ ու գեղեցիկ պարզութեա

նր : Աւագերէցը տարիքն առած մարդ էր , ու քառասունը հինգ տարիէն ի վեր կ'ընէր առ ժողովրդապետութեան պաշտօնը :

Քիչ մը հանդիստ տալէն վերջը տարաւ զՎ ալտիւն մօտ սենեակ մը , ուր սեղանատախտակի մը դիմացը երկու տղաք նստեր էին , որոնք իրենց վարպետը տեսնելուն պէս ոտք ելան ու յարդուլութեամբ ձեռքը պագին :

— Այլի՛ք ուրեմն , ըսաւ իրենց , գասերնիդ սորված էք . ասոնց մեծը սկսաւ ըսել բերնուց սորված Տիւր բանաստեղծին ոտանաւոր հատուածը անկեղանոցի վրայ :

„ Ա՛նկից հեռացած շխտակ կը վազեմ  
Ա՛յն սուրբ տեղերուն տեսնելու կ'եղեմ  
Որ ցաւոց , լիտաց կու տան ապաւէն ,  
Գրթութիւնն ասոնց հիմ դրբաւ արդէն  
Որ մարդկանց քաշած ցաւերն ախտաժէտ  
Հոս աստուածախնամ դարմաններուն հետ  
Բնդունին նաև սիրոյ խընամքներ :

Բայց ախտո՛ս այս հին ու նք տեղուարներ  
Շատ անգամ անհոգ խնամակալներու



Կամ՝ ազահուժեան զըզուելի ձեռքով  
Ըմենայն տեսակ վշտաց խեղճութեան  
Դարձեր են եղեր մէյմէկ օթեան :  
Հոս չորս պատերու մէջ խողուկ փակուած  
Սեռերն, հողելարքն ու հիւանդք դիզուած .  
Հոս գարշ գողոշիօք օդն ապականած  
Կ'ըլայ մահաբեր թոյն մը հիւանդաց .  
Հոն անկողնի մէջ խեղճիկ տարածուած  
Ոչ այնչափ ցաւոց՝ որչափ չափազանց  
Խնամոց կը տեսնես առջևըդ զոհեր ,  
Չոր տրդիտութիւնն յանգէտս է զարկեր .  
Կը տեսնէ անգութն այն Ընհողութիւն ,  
Կը թողու որ բաղդ վըճիտ տայ մահուն :  
Բայց երբ Գըթութիւն նորէն հոս դառնայ  
Որ իր վախճանին կատարումը տայ ,  
Դաս դաս կը բաժնէ , զհիւանդըս զատէ  
Ու ճարտար ձեռաց զանոնք կը յանձնէ  
Կ'ազատէ զերենք գողոշեաց հոտէն  
Որով և ախտից գէշ հետեանքէն՝  
Հողմաբեր երկար խողովակներով  
Ընդագար մէջի օդը փոխելով :  
Ո՛րչափ Գըթութեան ձեռօք բարեկարգ

Ամէնքն հոս առատ կը վայլեն խրնամբ .  
Սաքրութիւնն ամէն տեղ տիրէ մէկէն ,  
Կեանքն է սրահսրանուած մահուան ցուրտ  
շնչէն .

Կրօնից գլբկաց մէջ անխիղճ անխրուով  
Հողեվարքն անուշ կը մեռնի յուսով .  
Ուրիշ մը անդին կ'եղէ անկողնէն  
Հազիւ ազատած մահուան ճանկերէն ,  
Ու իր առջինեկ քայլերն առնելուն  
Գեռ կը դեղեկն սաք իւր դողդոջուն :  
Այսպէս ցանն ու կեանք , միշտ , կարօտուի  
Բզբեզ միշտ կ'օրհնեն , սիրուն Գլթութի  
Քեզմով հայրենիք կը մըխիթարուին ,  
Աշխարհք կը շինուի , երկինք ծիծաղին , :

— Աղէկ է ( ) գոստինոս , ըսաւ տղուն աւագ  
երէցը . տեսնեք հիմա Յովսէփն ալ այս  
պէս աղէկ պիտի կարենայ՝ զրուցել իսկ Յով  
սէփ վախով դողդրղալով սկսաւ , Գլթու  
թեան Քերց ոտանաւորը , ու հազիւ ընցուց .

“ Բացուցէք տըխուր դուք օթեաններ  
Ուր որ վերալից ինկած զինուորներ ,

Եւ կարօտն անտուն, հիւանդն անպաշտպան  
Երեսի վերայ յաճախ կը մընան ,  
Որ \*ԷՐՂ անոյշ անուն վըրանին  
Սիրալիր կուսանք հոն խընամ տանին :  
Երկար տարիներ սուրբ վանք մը կը թուած  
Մաղթելով երկնից որ գըթայ մարդկանց ,  
Ինքնանըւէր հարս կ'ըլլան Յիսուսին  
Ուխտիւք ծառայել , օգձել թըշուառին :  
Ո՛վ զարմանալի կըսեմ քաջութիւն .  
Եյս փափուկ կուսանքն ու պարկեշտասուն  
Վ աղէն կը մըսենն դարշահոտ տեղեր  
Ուր ամէն տեսակ կը վխտան վիշտեր .  
Հոն հարիւրաւոր խեղճ մարդիկնիրու  
Եմէն պիտոյից կ'ըլլան խնամածու .  
Օտոայութիւններ կ'ընեն դըթուարին ,  
Ինրդխայթ վէրքերու դարման կը տանին .  
Մաքրեն կը շտկեն այն անկողիններն  
Որ քաշած ցաւոցն են ճիշդ վրկաներ .  
Եյն խեղճ անկողինք՝ զոր ազահին գութ  
Նեղ , պղտիկ ձևեց ու թողուց աղտոտ :  
Եյս ըսքանչելի ու սուրբ կուսանքներ  
Մարդասիրութեան են կարծես պատկեր .

Կ'իմանան սիրով նաև այն խեղճերն  
Որ կը վայելեն ասոնց խրնամքներ ,  
Թէ մահուան դրոներն հասած ատեննին  
Կուսանի մը ձեռք զերենք փրկեցին :

— Երջնակէս քեզմէ ալ գոհ եմ Յովսէփի  
կրս , ըսաւ աւագերէցը . գացէք հիմա ը-  
րէք ձեր քերականութեան լուծմունքը՝ կե-  
րակուրէն առաջ , որ ետքը կարդաք ինձի .  
այսպէս ըսելով դնաց :

— Ես սպտուական երկու սղտի աշա-  
կերաներդ , ըսաւ Վալտէն աւագերէցին ,  
յուսամ որ որ մը մեծ հաճութիւն կը  
սպտաճառեն ձեզի : — Եսոնք երկու որբ  
տղաք են , սպտասխանեց , տանըութը  
ամիս է որ քովս առեր եմ , որոնց հայրը  
առաքինի ոստայնակ մին էր ժողովրդա-  
պետութեանս մէջ . մեռա՛ ու տղաքը ան-  
տերունջ թողուց . մայրերնին ալ շատ  
տարի է որ մեռած է : Ես սղտի խեղճ  
որբերուն վրայ սիրտս շարժելով , տեսայ որ  
մէկը յանձն չառնէր՝ ես քովս առի . ու  
շատ ուրախ եմ աս բանիս . կը տեսնեմ  
որ ուսման մեծ յարմարութիւն ունին , կը

յուսամ զանոնք մեծցրնել, և որ մը ար-  
ժանաւոր քահանաներ ձեռնադրել տալ .  
միայն թէ Մատուած կեանք տայ աս բա-  
նիս հասնելու : — Հրամանքնիդ գեղեցիկ  
գործքի մը ձեռք զարկիր էք, մեծարոյ ա-  
ւագերէց, ըսաւ Վալտէն սրտանց, ու  
գուք ձեզի կը սլատրաստէք գեղեցիկ պսակ  
մը երկինքը . որբերը առնուլ ու սորվեցրնել  
Մատուծոյ նուիրելու համար, ասիկայ մէկ  
գերազանց գործք մըն է՝ որուն գովութիւն  
չսաւեր : — Պէտք է բարեգործութիւն  
ընել երբոր դէսք մը առաջք ելլէ, սրա-  
տասխանեց, ինչպէս որ կ'ըսէ առաքեալը .  
որպէս զի չըլանք աշխարհքիս մէջ ան  
քանքարաթաղոյց ծառային պէս, որուն  
համար կ'ըսէ աւետարանը, թէ իր տի-  
րոջմէ առած տաղանդը տարեր թաղեր  
է : Արնամ ըսել որ մենք ամէն որ կը գըտ-  
նենք բարեգործելու սլաոճառներ, բայց  
ինչուան որ չկարենանք գործածել՝ ինչ  
բանի կու գայ :

Վալտէ մեծապէս շինուեցաւ աս պա-  
տուական հովուին առաքինութեան ու  
խօսակցութեանը վրայ . և ան իրիկուն հոն  
իրեն անցած նեղութեանցը մէկ մասը մոռ-

յաւ : Սեղանակից եղաւ պատուական երի-  
ցուն՝ սրբոյ կերակուրներուն . մէկ հան-  
դարս դիշեր մը անցուց , ու առաւօտը  
պատարագ տեսնելէն ետքը , բոլոր սրտանց  
շնորհակալութիւն ընելով իր առաքինի բա-  
րերարին , ճամբայ եղաւ :

Վալտէն ճամբան չմուրալու համար ,  
հետը քիչ մը ուտելիք առաւ՝ որն որ ա-  
ւագերէցը տուաւ իրեն : Աւ վերջապէս աշ-  
խատելի ճամբորդութիւն մը ընելէն ետքը՝  
եկաւ հասաւ այրած քաղաքը . ու անկէ  
անցնելով շատակ դէպ ի իր գեղը սկսաւ  
փութով առաջ երթալ :

Տեսնելով բրակը որուն վրայ շինուած  
էր տունը . տակն ու վրայ եղաւ սիրտը , որ  
այնչտի երկայն ճամբորդութենէ ետքը՝  
չկրցաւ բան մը բերել , ու շատ դժուար  
կ'երևար իրեն աս ըսել , ու չէր գիտէր թէ  
ն'նչպէս յայտնէ Ֆէնհէյմին իր գլխուն  
եկածները : Գողգըղալով հասաւ տունը ,  
ու զարկաւ դուռը : Իրիկուն էր ու բոլոր  
ընտանիքը մէկ տեղ եկած աղօթք կ'ընէին .  
մէյ մըն ալ յանկարծ լսեցին դրան ձայնը :  
— Ա՛հ , ո՞ր էր թէ հայրս ըլլար , կան-  
չեց Վալտէին անդրանիկ աղջիկը :

Վնայ մայրը տղոցը հետ դուռը բանալու, ու — Քարի եկար՝ սիրելի, կանչելով պագտուեցաւ, երջանիկ եմ որ նորէն տեսնուեցանք, կ'ըսէր. սիրտս շատ անհանդիստ էր քեզի համար, ու հիմա աղօթքէ վազեցինք՝ որ քու երջանիկ դարձիդ համար կ'ընէինք :

Վ ալտէն ներս մտաւ, ու Ֆէնհէյմ գրկուելով կ'ըսէր, — Ի՞նչպէս շնորհակալ ըլլամ քու բարերարութեանցդ՝ սիրելի, Աստուած միայն կրնայ վարձատրել դքեզ ինծի ըրածներուդ փոխարէն :

Աղնէս, Տորոթէա, Յուստինէ՛, ու արդաքը ճամբորդին չորս կողմը պատեցին, ու սկսան հարցմունքներ ընել : Վաստուական հայրը նստեցաւ, ու ճակտէն քրտինքը սրբելով ըսաւ, — Օրհնեալ է Աստուած որ դարձուց զիս տունս . Տորոթէան դնայ կերակուր պատրաստելու երկանը : Աստու Վ ալտէ ուտելու, ու սրտով սկսաւ ինչ որ Ադրիանոս Արիկլէր ուզեց ընել Ֆէնհէյմին համար . ամէնուն աչքերը արցունքով լեցուեցան, սիրտերնին ելաւ, ու կ'որհնէին առաքինի վաճառականը՝ որ այսպէս փոյթ ունեցիր է օգնելու իր հին բարե-

բարին : Բայց երբոր խմայան Վալտէին  
գլխունն եկած գծբաղդութիւնը , ու վասն  
զը որուն մէջ ընկեր էր , ուրախութիւննին  
ոգրի փոխուեցաւ . փոխանակ սաստիկ ու  
բախտութեան սուգ ու լայ տիրեց ամէնուն  
սիրտը :

Պատմելով Վալտէ չարագործ աւա  
զակներուն անիրաւ գործողութիւնը՝ որ  
բոլորովին ունեցածը չունեցածը յաւիշտա  
կեցին , ծածկեց Ֆէնհէյլին որդւոյն անու  
նը . որպէս զիս աս նոր աղէտալի լրով խեղճ  
հորը սիրտը աւելի չելէ որ արդէն վշտացած  
էր : Արցունքը սրբելով Ֆէնհէյլ , Ատու  
ծոյ կամքը ըլլայ ըսաւ , պէտք է լռենք ,  
ու իրեն յանձնենք զմեզ՝ որ այսպէս կամե  
ցեր է . վասն զի շինար մեզի Ատուծոյ  
գէմ ելել : Մենք իրեն որդիքն ենք , ինքն  
ալ հայր է . ինքը գիտէ մեզի ի՞նչ օգտա  
կար է . ուրեմն տանինք համբերութեամբ  
ինչ որ ուզէ մեր վրայ խրկել , ու զգուշա  
նանք տրանջաղէն իր անհասանելի վճռոյն  
գէմ , որ չըլլայ թէ հեռացնենք մեզմէ իր  
հայրենի խնամքը :

Աս խօսքերովս չդողբեցաւ երկու ըն  
տանեաց սուգը , ու երկար ատեն կու



Լային . մանաւանդ Ազնէս և Յուստինէ  
աս նոր դժբաղդութեանը վրայ սաստիկ  
վշտացան . որովհետև շատ կը փափաքէին  
ուրիշ տեղ մը երթալու , որ չըլլայ թէ  
ճանրութիւն ըլլան իրենց ասպնջականնե-  
րուն : Անձ յուսոյ մէջ էին , ու ասով  
յանկարծ բոլոր յոյսերնին ոչնչացաւ .  
երկու ժամի շափ լալով ցաւելէն ետքը ,  
բաժնուեցան քնանալու գնացին :



## ԳԼՈՒԽ Է

Յանդուզգև խորհուրդ .

ՆԱԶԻԻ թէ հեռացաւ Վալտէ աւազակներու որջէն, անտառին մէջ մտան անոնք՝ Ֆէնհէյմին որդին՝ Նորայերթ պատանին ալ տանելով հետերնին, որ իրենց գլուխն էր : Ըստ մը տեղ առաջ երթալով՝ կեցան . որոշելու թէ ի՞նչ պիտի ընեն, որովհետև կը վախէին թէ հիմա Վալտէն կ'երթայ զիրենք մատնելու դատաւորին, ու ձեռք կ'իյնան հոն : Աւստի շուտ մը միաբանեցան մէջերնին ան տեղը թողլով՝ իրենց աւազակութիւնը ուրիշ կողմեր դարձնելու :

Դեռ Նորայերթին ձեռքն էր Վալտէին թուղթը, որուն մէջ էին փոխանակագիրները և մօրը խրկուած տանձը . ասոնք դրժոխքի խանձող մը կ'երևնային իրեն, ու կ'այրէին սաստիկ իր անօրէնութեամբ աղտեղած հոգին : Չէր կրնար աչքը անոնց

վրայ դարձնել առանց զգալու սարսափելի  
խղճմտանք մը որ զինքը կ'ուտէր : Վէմբին  
վրայ պատած տրտմութիւնը կը յայանէր  
ընկերներուն , թէ ի՞նչ խեղճ վիճակի մէջ  
է սիրտը . խմացան անոնք իր խորհուրդ-  
ները , ու վախնալով որ չըլլայ թէ փախ-  
չի , սկսան ջանալ որ մտքէն փարատեն  
զինքը տանջող տխուր մտածմունքները :

Վինին ձեռք առին , ու Վորպերթ զա-  
նոնք խաբելու համար կամաց կամաց իր  
առջի զուարթութիւնը սկսաւ կեղծել . այն-  
պէս համոզուեցան որ մտքերնին դրին թէ  
իրենց առաջնորդը՝ ուրիշ ատենէն աւելի  
շահերնին կը մտածէ : Բայց ասկէ ետքը  
Վորպերթ միտքը դրեր էր որ մարդու վրայ  
չյարձրիկի , ու առաջադրեր էր աւազակու-  
թենէ ետ կենալ : Թէպէտ իր ընկերներուն  
գիշերային աւազակութեանցը հետ մէկ-  
տեղ էր . բայց երբեմն աս ու երբեմն ան  
պատճառով կ'առանձնանար , ու իրենց  
ալ մասնաւոր հրաման մը չտալով , տես-  
նող մը միայն կերևար հոն : Աս կերպս  
չատ վշտացուց ան գազանավտ աւազակ-  
ները :

Սեպտեմբեր ամսուն գեղեցիկ գիշեր մըն

էր , որը տաք , ու իրիկուան հօլը գեղե-  
ցիկ զովութիւն մը կը բերէր . սկսեր էր  
աշնան տերեւածափը ու այգեկութքը , գի-  
նուոյ շտեմարանները բացուած , հնձանները  
մաքուր և պատրաստ լեցուելու քաղցուով :  
Գեղացիները ամէն կողմէն երգելով ու ցին-  
ծութեամբ կ'երթային այգիներն՝ ժողկելու  
անուշահոտ ողկուղները : Քանի մը օր էր  
որ որոշեր էր աւազակներու ժողովը՝ բաց  
տեղ եղած տան մը վրայ յարձակելու , ուր  
դիտէին որ ծառաներէն շատը քանի մը  
փարսախ հետու տեղ այգեկութի դացած  
էին . ընտրեցին գիշեր մը աս չարագոր-  
ծութիւննին կատարելու :

Ահս օրուան առատ կերակուրնին ու  
տեղէն վերջը , պառկեցան իրենց մութ ան-  
տառին մէջ ու քնացան . Արարելի միայն  
արթուն կը տանջուէր իր սաստիկ խղճ-  
մտանքէն : Քանի որ միտքը կը բերէր  
աւազակներուն հետ անցուցած տարիներ  
ըր՝ կը սաստկանար ցաւը , ու կ'աւելնար  
իր վիճակին վրայ ունեցած սոսկումը :  
Վերևար իրեն թէ ձայն մը կը լսէ : Աս-  
տուծմէ օր երեսը կը զարնէր իր անօրէ-  
նութիւնները , ու կ'իմացնէր որ ալ չա-

բութեանցը չափը լեցուեցաւ . և թէ գե-  
րագոյն գառաւորին ձեռքը վերցուցած է  
շուտով մատնելու զինքը մարդկային ար-  
դարութեան տունին , իր անօրէն կեանքը  
գոնեա անով մաքրելու համար :

Աս իշտաղի մտածմանցը մէջ՝ Աորպիւրթ  
իւր չարագործ կենացը յիշատակուլո՞ր որ-  
սորդի նետով վերաւորած եղնիկի մը կը  
նմանէր , որ չէր գիտեր մահունէ ո՞ր փախ-  
չի . կ'ուզէր շուտ մը փախչելով խալսիլ  
աս անօրէն մարդկանց ընկերութենէն , ո-  
րոնց քունն ալ ահաւոր էր : Աարսափով  
մը կը նայէր իր ընկերներուն դէմքին  
միայ , կը տեսնէր երեսնին կապտակած ու  
կատաղի , հեռի ամենեկին ատուած սաշ-  
տութեան շնորհքէն . կը նայէր ճակատ-  
նին՝ ուր իրենց հոգւոյն անօրէն խորհուրդ-  
ները գրօշմած կ'երեւնար . կը մտածէր թէ  
ի՞նչ մեծ տարբերութիւն կայ արդարոյն և  
չարագործին քունին մէջ : — Ա՛հ , կ'ըսէր  
ինքիրէն , իմ հօրս քունը այն անօրէն  
մարդկանց քունին պէս խառնակ չէ ,  
որոնք հայր ըսուելու ալ արժանի չեն : Ա-  
ռաքինի Վէնհէյսը չէ շիտթած ամենեկին  
իւր քնոյն մէջ մահուան , յափշտակութեան

ու չարագործութեան մտածմունքներով, ու  
բռնք կը ծփին աս սոսկալի հրեշներուն ա-  
չացը միայ : Խաղաղութեամբ կը քնանայ  
Ֆէնհէյմ՝ ծառի մը տակ տունը այրելէն  
ետքն ալ, կ'ուտէ հիւրընկալութեան հա-  
ցը, բայց մաքուր է հողին ու խաղաղու-  
թեան մէջ . որովհետեւ հաշտ է ընդ Աս-  
տուծոյ : Իսկ հոս, ո՛վ թշուառութեանս,  
ամէն բան խռովութեան մէջ :

Ար դատապարտեմ ես աս մարդիկը՝  
որոնց հետ այնչափ անգամ ընկերութիւն  
ըրի, ի՞նչ բան ես ինձի, որ իրենցմէ աւելի  
անօրէնութեանց մէջ թաթխուեր եմ . ու  
բովհետեւ ոչ միայն ընկեր եմ իրենց, այլ և  
գլուխ չարագործաց : Ի՞նչպէս կը յան-  
դրգնիմ ուրեմն դատապարտել զասոնք .  
իմ յանցանքներս իրենցմէ սոսկալի չե՞ն  
մի : Ո՛վ Աստուած իմ, Աստուած իմ,  
ողորմէ՛, գթա՛ ինձի :

Քանի որ Աորպերթ աս մտածմանցը  
մէջ ընկղմեր էր, գիշերը կը կոխէր, ու լուսի-  
նը դեղնցիկ սպիտակ ամպի մը մէջէն լսիկ  
կ'ելէր, ու խաղաղ սահելով օդի մէջէն,  
ու սպտելով աստղերը սրոնց փալկուան  
լոյսը կը զարդարէր երկնքի կապոյտ երեսը .

իր սկաւառակին լոյսը՝ դողդշուն ճառագայթով թափանցիկ կ'անցնէր անտառի ծառերու տերևներէն՝ որ կամաց կամաց կը շարժէին : Աս գեղեցիկ պայծառութիւնը կը թափանձէր անձաւին մէջ՝ ուր կը քնանային եօթը չարագործք, որոնք արթննալով ահու դողի մէջ պիտի ձգէին խաղաղ տուն մը : Շարժեցաւ 'Աորպերթին սիրտը աս տեսարանիս որ ամէն բարի սրտերու մեծ ազդեցութիւն կ'ընէ . կ'երևար իրեն թէ աս խաղաղարար աստղը կը յանդիմանէ զինքը, ու կը հրաւիրէ թողուլ իր ընկերները :

— Ա՛հ ըսաւ ինքիւրեն, ի՞նչ գեղեցիկ, ի՞նչպէս շիտակ կը բարձրանաս երկնային գաւառին մէջ, քաղցր գիշերային ջահ . արարիչն Աստուած, հաղար տարիներէ ի վեր հաստատեր է քու շրջանդ, ու կը հնազանդիս իր ձայնին : Ար լուսաւորես ոչ միայն բարի մարդկանց ննջարանը, այլ չարագործներու ալ կու տաս այցելութիւն իրենց անօրէն որջին մէջ, ու առատապէս իրենց ալ կը շնորհես քու լուսոյ բարիքդ : Ար կատարես ընթացքդ առանց ամենեւին մոլորելու, զորն որ ցուցուցեր է յաւիտենա-

կանր , որ ինծի պէս բանաւորութեան  
 շնորհք ալ չունիս , ինծի պէս անմահ հո-  
 գի մ'ալ չունիս փրկելու համար , ինծի  
 նման վախճան մ'ալ չունիս . որ մը ոչինչ  
 պիտի դառնաս՝ քանի որ ես անմահ եմ :  
 Ի՞նչ պատասխան պիտի տամ Աստու-  
 ծոյս , ի՞նչ բարիք ըրեր եմ աշխարհքիս  
 վրայ , ո՞ր առաքինութեամբ զարդարեր եմ  
 հոգիս . կը հարցնեմ ես ինծի , ու խղճ-  
 մտանքս ծանրացած կը տանջէ զիս :

Յիրաւի Աստուծոյ շնորհքը չարաչար  
 գործածեցի , ամէն յոյսերը մերժեցի հան-  
 դերձեալ երջանկութեան վրայ , ոտքիս տա-  
 կը դժոխքի անդունդ մը բացի . հրէշ մըն  
 եմ Աստուծոյ առջևը , միայն անարգու-  
 թեան արժանի : Վակայն պէտք չէ որ յուսա-  
 հատիմ . վերջ տամ անօրէն կենացս , դժոխ-  
 քի արբանեկաց հետ ունեցած դաշինքս լու-  
 ծեմ , խոստովանիմ մեղքերս , նոր մարդ-  
 ըլլամ և բոլորովին դառնամ . երթամ ու-  
 ընմն կատարելու ըրած առաջադրութիւն-  
 ներս : Գիշեր է , ընկերներս ալ քուն են .  
 փախչիմ լռիկ աս չարագործներու խում-  
 բէն , ու վտասահանամ Աստուծոյ բարու-  
 թեանը՝ որ զիս ասպահով տեղ մը կը ձգէ :



Այլ չդանդաղեցաւ 'Նորայերթ , վերջի նայուածքով մի նայեցաւ աս մարդկանց վրայ որոնց վիճակին կը ցաւէր , ելաւ սրտաբաստուեցաւ անցնելու աս քարանձաւին սահմանը : Ոտուրները՝ անցաւին մէջ ժողովուած ցամքած տերէներու զարնուելով խշրտոց մը ելաւ , ու աւազակներէն մէկը արթնցաւ . կարծելով ասիկա որ աւազակութեան յարձակման ժամանակը եկեր է , շուտ մը արթնցուց ընկերները :

Մատնեցաւ 'Նորայերթ , բայց ամենևին խռովութիւն մը չցուցուց : Ամէնքը ոտք եղան , զիրար կը բարևէին հարցնելով թէ երթալու ժամանակը եկա՞ւ , ու զէնքերնին կը սպասորաստէին : 'Նորայերթ՝ անոնց աս շտապելուն մէջ հանդարտութեամբ մը իմացուց որ գիշերը դեռ բաւական չէ կոխած , յարձրիկը ժամանակ չէ : Աս կ'երթամ , կ'ըսէ , լրտեսելու գեղը . հաւանեցան ամէնքը , գովեցին խորհուրդը՝ իրենք իրենց երջանկութիւն ու յաջողութիւն խոստանալով . որով հետև երկայն ժամանակ սպարապ կեցած , առաջնորդնին յանձն կ'առնուր բաներնին կարգի դնելու հոգը : Աւելցին ոմանք հետը երթալ , բայց խօսք

մը բաւական եղաւ տեղերնին հանդարտեց  
յրնեղու զանոնք , ու գնաց Նորսելիթ :

Քանի որ կը հեռանար իր չարագործ  
ծութեանցը տեղէն , այնչափ կը բացուէր  
սիրտը . կ'երևար թէ ամէն բան կը նորո-  
գուի իր վրան , խղճմտանքը անհնարին  
ծանրութենէն կը թեթեւայ՝ որ դեռ ոտք  
մը առեր էր առաքինութեան մօտենայու :  
Արբոր բաւական հեռացաւ ընկերներէն ,  
որ ալ վախ չկար թէ ետեւէն հասնին , թու-  
ղուց զէնքերը , սուրը , կայինը ու ատրճա-  
նակը , և սկսաւ վազել որ կրցածին չափ  
ապահով ըլլայ իրենցմէ : Այսպէս բոլոր  
զիշերը ճամբայ ըրաւ դէպ ի Արթիանոս  
Արեկէրի բնակած գեղը . որպէս զի զինքը  
բարեխօս բռնէ հօրը հետ հաշտեցնելու :

Առաւօտը կանուխ հասաւ սղտի գեղ  
մը , սլանդոկ մը մտաւ , հին նախաձաշիկ  
ըրաւ , ու զգեստ մը գնեց , որպէս զի ա-  
ւելի վայելուչ երևնայ հօրը աշակերտին դի-  
մայը : Ատքը ճամբայ կ'ընէր անդադար  
օրհնելով զԱստուած՝ որ ազատեց զինքը  
չարագործութենէ . և յիշելով անցեալ  
յանցանքները՝ շարունակ արցունք կը թա-  
փէր : Իր հետը առած էր նաև գրամական

տումները և Վալտէէն յափշտակած ուրիշ  
բաները : Ար փափաքէր ժամ մը առաջ  
հայրը տեսնել և իրեն խմայնել : իր վարուց  
փոփոխութիւնը , ու յանձնելու անոր ան  
քիչ ստակը զոր առաքինի Աիեկէր իրեն  
խրկեր էր :

Աս առջի անգամ մտաւ եկեղեցի մը՝ որ  
շատ տարիէ ի վեր չէր գիտեր , և մաքսաւո  
րին պէս չհամարձակելով Աստուծոյ սե  
ղանը մօտենալ , դիմացը կեցաւ , ու կուրծքը  
ծեծելով իր անհամար մեղացը թողութիւն  
կը խնդրէր . և ողորմած Աստուած ընդու  
նեց սիրով աս նոր անառակին խոնարհ ա  
ղօթքը :



## ԳԼՈՒԽ Ը

Հաշտուրիւն ընդ Սառուածոյ .

ՔԱՆԻ որ հեռացաւ Նորայերթ իր ընկերներէն , անոնք իրեն դարձին կ'ըստասէին անձաւին մէջ . ու երբոր նայեցան որ եկող գացող չկայ , կասկածելով որ փախեր է , սաստիկ կատղեցան . և իրենցմէ տարւոք մէկը ցուցնելով իր գազանութիւնը երդուրնցաւ մահու չափ ատելութիւն մշտնիչին դէմ՝ որ այսպէս զիրենք խաղըրաւ , երբոր դեղեցիկ արշաւանքի մը ձեռք պիտի զարնէին . կը հաստատէր թէ ուր որ գտնեմ սպաննեմ պիտի Նորայերթը : Գովեցին ամէնքը մէկ բերան աս սպառնալիքը , ու ան արիւնարբու մարդը իրենց աւագակապետ դրին :

Մէջերնին միաբանուէն կտրը , որոշեցին որ երթան յարձրկին տանը վրայ . հարուստ աւարի մը յուսով ճամբայ եղան

ուրախութեամբ . և հասնելով հոն դիւ-  
րաւ ելան սանդուխով գաւթին պատին  
փայ . կը մտածէին դրան մէկը փրցնել ու  
ներս յարձակիլ տանը մէջ . բայց իրենց  
չկարծած թշնամեաց հանդիպեցան : Տանք  
տէրը իրեք մեծ պահապան շուներ ու-  
նէր , աս հաւատարիմ կենդանիները շնկոյր  
լուելուն պէս վազեցին , և կատաղութեամբ  
յարձակեցան աւազակներուն փայ , ու  
անոնցմէ շատը խածխածելով ժամանակ  
տուին իրենց տիրոջը՝ ելել տունը սլաշա-  
պանելու : Աս մարդս երկու բերնով հրա-  
ցան մը ունենալով՝ սքարպից պատուհանէն  
աւազակներուն փայ , ու անոնցմէ երկուքը  
պառկեցուց հոն . ետքը գաւթը ինչաւ  
մէկալ իրեքն ալ բռնելու , զորոնք շները  
վերաւորած՝ չէին թողուր փախչիլ : Այս-  
պէս աւազակներէն հինգը բռնուեցան , ու  
մէկալ երկուքը տեսնելով որ բաներնին  
լմրնեցաւ , թողուցին փախան : Մեծողնե-  
րուն մէջն էր ասոնց նոր աւազակապետն  
ալ՝ որ անհաշտ թշնամութիւն կ'երդուրն-  
նար 'Արդպիրթին դէմ : Այսպէս մաք-  
րուեցաւ գաւառը աս չարագործաց ձեռ-  
քէն , որ անօրէն յափշտակութիւններով և

սպաննութեամբ տակն ու վրայ կ'ընէին  
երկիրը :

Իսկ Աորալերթ չորրորդ օրը հասաւ Ադ-  
րիանոսին տունը , ու իր վաճառակիցնե-  
րէն մէկուն ձեռքովը՝ իմացուց իրեն . և  
ընդունելութիւն գտնելով՝ մտաւ սենեակը  
ու գնաց ոտքը ընկաւ :

Տեսնելով Ադրիանոս իր բարեբարին  
որդին , չէր կրնար հաւատալ աչքերուն .  
քաղցրութեամբ մը վեր կանգնեցուց ու  
պագտուելով իմացուց իր սրտին ուրախու-  
թիւնը՝ որ տեսաւ զինքը : — Ար յուսամ  
որ ինչպէս ապաշխարող մը կու գաս . շա-  
տերէն լսեր եմ թէ աւաղակներու ընկեր  
եղեր ես ու զլուխ . և դէմքիդ զծագ-  
րութիւնը շատ անգամ հրատարակուեցաւ  
օրագրայ մէջ . ճակտիդ վէրքի նշանէն  
ճանչցայ որ դու ես , բայց չուզեցի յայտ-  
նել հօրդ որ չվշտանայ սաստիկ : Այս ա-  
ռաքինի մարդս միտքը դրեր էր թէ գու-  
տար երկիր կը գանուիս վաճառակա-  
նութեան մէջ , ու կը յուսար օր մը տես-  
նել զքեզ իմաստուն ու բարեկարգ : Այ-  
նօր էր թէ չխաբուէր իր կարծեացը  
մէջ :

Վորպերթ սկսաւ լալ, ու հանելով զըն-  
սկանէն Մգրիանոսին դիմացը դրաւ, տոմ-  
սակները, տանձը, մատնին ու թուղթը՝  
որ Վալտէին ձեռքովը հօրը խրկած էր :  
Տէր Մատուած, ինչ կը տեսնեմ, կանչեց  
Մգրիանոս, ասոնք ինչպէս քու ձեռք  
անցեր են : Մէկիկ մէկիկ պատմեց Վոր-  
պերթ ամէն բան . ու լալով ըսաւ, թէ ա-  
սոնք են ահա իմ փրկութեանս պատճա-  
ռը . աս տանձը միտքս ձգեց հրամանքիդ  
մեր տունը դալը . տոմսակները յայտնեցին  
ինձի քու երախտագիտութիւնդ, ու հօրս  
օգնութիւն հասնելու փոյթդ . ամբոյցայ՝ որ  
օտար մը այսպէս անոր խեղճութեան ձեռք  
տայ, երբ որդի մը թշուառ հօրը առջին  
ապերախտութեան հրէշ մը դարձեր է,  
չարագործ ու գլուխ աւազակաց, հաղար  
անգամ մահուան արժանի մարդ մը : Մեծ  
դժուարութեամբ հազիւ կրցայ ազատել  
զասոնք անգզամ ընկերացս ձեռքէն :

Մգրիանոս ուրախութեամբ մը — Օր-  
հնէալ տէր Մատուած, ըսաւ, որ զօրու-  
թիւն տուաւ քեզի խորտակելու աս ան-  
կարդ կասպանը՝ որով անօրէնութեան հետ  
կասպուէր էիր : — Յիրաւի, ըսաւ Վոր-

պերթ . յիրաւի . շնորհակալ կ'ըլլամ Աստուծոյ , որ այսպէս կարգի դրաւ ամէն բան : Թէ որ ճանչնայի Ալարտէն՝ անշուշտ դեռ երկար ատեն անկարգ կենացս մէջ պիտի մնայի , ու թերեւ ինչպէս շատերուն սովորական է , իմ վերջս ալ կ'ըլլար կախազան և յախտենական կորուստ : Բայց հիմա ըմբար , կ'ուզեմ դառնալ առ Աստուած , և կ'աղաչեմ հրամանքիդ՝ որ ութը օրուան չափ քովդ պահես զիս , որպէս զի կարենամ աղէկ մը քննել իմ անցեալ կեանքս , ու ընդհանրական խոստովանանքով մը սրբուիմ : Արթիք ըրէ ինձի համար , որ Աստուած լուսաւորէ զիս , բանայ աչքս ճանչնալու իմ կենացս անկարգութիւնը :

Օյիս ծածկելու հոգ չեմ խնդրեր քեզմէ , այլ տուր ինձի տանդ մէջ պղտի սենեակ մը՝ որ հոն ապաշխարեմ , ինչուան խոստովանիմ , ու Աստուծոյ հետ հաշտուելով ըլլամ բոլորովին նոր մարդ : Ատքը օգնէ ինձի՝ իմ երջանկութիւնս կատարեալ ընելու և տար զիս հօրս գիրկը՝ որուն գիմայր մինակ երենալու երես չունիմ : Ինչպէս քու սարգեաներդ դար-



ձիս պատճառ եղան , այսպէս ալ գու  
եղիր միջնորդ զիս հօրս հետ հաշտեցը  
նեղու :

Արրիանոս զարմացեր էր ‘Աորպերթին  
գեղեցիկ փոփոխութեանը վրայ . ինչպէս իր  
եղբայրը սրտանոց գրկելով զինքը ըսաւ . —  
Քու տանդ . պէս համարձակ եղիր , սիրելի  
բարեկամ , կեցի որչափ որ կ’ուզես : Առան  
ձին սենեակներէն մէկը առ’ որ հանդիստ  
ըլլաս , ու ազատ’ կարենաս քու հոգւոյդ  
փրկութեան բաները հոգալ : Յուցրնեմ  
քեզի պատուական խոստովանահայր մը ,  
որ ինչպէս հայր’ սէր և զթութիւն ունե  
նայ վրայդ , ու կորստեան ճամբէդ ազա  
տէ , որուն մէջ բռնուերես . ետքը քեզի հետ  
կ’երթանք հօրդ : Ա՛հ , երբ պիտի տեսնեմ  
ան պատուական մարդը : Արախի ուրա  
խութեամբ արդեօք պիտի պագտուի քեզի  
հետ . կարծեմ թէ կը տեսնեմ իր ու մօրդ  
լայր : Յուստինէ քոյրդ ալ շատ պիտի  
ուրախանայ տեսնելով իր սիրելի եղբայրը ,  
որ գիտեմ շատ կը սիրէր զքեզ :

Քաշուեցաւ ‘Աորպերթ Արրիանոսին  
տուած սենեակը , ու աս առանձնութեանը  
մէջ յաւօք սրտի միտքը կը բերէր իր ան

Թիւ մեղքերը : Իր բարեկամն ալ պատուա-  
կանս գիրք մը տուաւ՝ հաստատելու զինքը  
բարի առաջադրութեանցը մէջ . ու ապա-  
հով ընելու իր դարձը : Արբեմն կ'երթար  
խօսելու , և սիրտ տալու իրեն . ու շատ  
անգամ կը գտնէր զինքը խաչին ոտքը ըն-  
կած՝ լալով , ու ինքը զինքը աշխարհքիս  
մէջ առջին մեղաւորը սեպելով : « Աորսերթ  
ինքն իրեն շատ ապաշխարանքներ դրաւ .  
գետնի վրայ պառկիլ , երբեմն բոլոր օրը  
ծով պահել , գինի չխմել , և քանի մը  
իրիկուն ալ քիչ մը ցամաք հացով ան-  
ցընել :

Աւ այսպիսի պատրաստութեամբ և մեծ  
զղջումով ըրաւ իր խոստովանութիւնը , որ  
ինչուան խոստովանահայրն ալ լացուց :  
Պատուական քահանայն տեսնելով ասոր  
կատարեալ ապաշխարութիւնը արժանի  
սեպեց աս դիպուածիս մէջ եկեղեցւոյ գը-  
թութեան օրէնքով արձակում տալ « Աոր-  
սերթին , և տարակոյս չունենալով անոր  
դարձին անկեղծութեանը վրայ , հրաման  
տուաւ նաև հաղորդուելու :

Սեմ կրնար պատմել հոս աս ապաշ-  
խարողին սիրոյ բորբաքումը , և սրտին վա-

ուեալ ուրախութիւնը՝ սրբութիւն առնելու  
ատեն : Արքայ թէ կը բացուէր երկինքը  
ու Աստուծոյ շնորհքը վրան կ'իջնար , և  
աս երջանիկ վայրկենիս մէջ՝ գրեթէ բոլո-  
րովին վերացեր էր աշխարհքէս : Ադրիա-  
նոս իր բարեկամը քովը չողած՝ մասնակից  
կ'ըլլար անոր ուրախութեանը , և երկուքն  
ալ յափշտակուած էին անպատմելի քաղ-  
ցրութեան մէջ՝ սուրբ խորհուրդը ընդու-  
նելով : Հաղորդուելէն ետքն ալ երկայն  
ատեն՝ Աորպերթ Աստուծոյ հետ խօսա-  
կից ըլլալով՝ շնորհակալ եղաւ իրեն այնչափ  
բարերարութեանցը , ու անկէց ետքն ալ  
օգնութիւնը խնդրեց . խոստացաւ միշտ  
ապաշխարողի կեանք մը անցընել , ու այս-  
պէս քաւել իր մեղքերը :

Արբոր տուն դարձան աս երկու բարե-  
կամք՝ ուրախութեամբ սրտի պագտուեցան  
իրարու հետ , ու Ադրիանոս խնդակից ե-  
ղաւ աս ապաշխարող մեղաւորին՝ որ Աս-  
տուծոյ շնորհքը գտաւ . ետքը սկսան խօ-  
սիլ ճամբայ ելելու վրայ : Ադրիանոս քա-  
նի մը հարկաւոր գործողութեանցը պատ-  
ճառաւ դիմացի չորեքշաբթին թողուց ճամ-  
բայ ելելը , որպէս զի շաբաթ իրիկունը

Հասնին Վալտէին տունը, և կիրակի օրը  
հոն անցնեն երկու ընտանեաց մէջ : Աս  
միջոցին երկու կարգ զգեստներ շինել  
տուաւ 'Նորպերթին . դիպակներ ու չու-  
խաններ գնեց Ֆէնհէյլին ու անոր կնկանը  
և աղջկանը համար . աուա տոմսակները,  
տանձը և ուրիշ ինչ որ սրտորաստեց . և  
աս երկու բարեկամները մտան գեղեցիկ  
կառք մը օրագնաց թղթատան ձիերով,  
ծանր ու բռնաւորած ճամբայ ելան :

Ագրիանոս՝ որ իր խորհուրդը ծածկեր  
էր 'Նորպերթէն, այնպէս կարգի դրաւ  
բաները որ ուրբաթ իրիկուն հասնին ան  
գեղը՝ ուր էր Ֆէնհէյլի տունը : Պան-  
դոկ մը իջան, ու քիչ մը հանգչելէն և  
կերակուր ուտելէն ետքը, գնացին այրած  
տեղերը տեսնելու : խանձողները դեռ կը  
մխային, ու նշան չկար ամենեկին թէ նո-  
րէն տներնին շինելու միտք կայ մի : Աչ-  
քերնին արցունքով զննեցին աս տխուր  
աւերակները ու դարձան :

Յիշեց 'Նորպերթ երջանիկ տարիները  
որ անցուցեր էր աս տանը մէջ, որ հիմա  
կոյտ մը միխիլէն ուրիշ բան չէր երևնար :  
Խղճմտանքը կը յիշեցնէր ծնողայր տուած

վիշտերը . բայց շուտ մխիթարուեցաւ յու-  
սալով որ անկէ ետքը կամք ու փոյժ պի-  
տի ունենայ ասոնց փոխարէնը հատուցա-  
նելու իր լաւութեամբը :



## ԳԼՈՒԽ Թ

### Երջանիկ շնորհաբեր .

ՆՐԲՈՐ երկու ճամբորդները պանդոկ դարձան , ու ելան իրենց բռնած սննեակը . Աղբիանոս թուղթ գրելու պատճառաւ արթուն կեցաւ , և սկսաւ մտածել ՖէնՏէյմին վիճակին վրայ : Ատքը պանդոկապետը կանչեց հարցուց թէ քաղքիս մէջ ծախու տուն մը կը գտնուի բաւական մեծութեամբ , միանգամայն խմայնելով որ ստակն ալ կանխիկ կու տայ : Մտածելով պանդոկապետը երկար ատեն , գիտեմ ըսաւ , ծախու մէկ տուն մը , բայց քանի մը ամիսէն հազիւ կ'ըլլայ որոշումը : Աղբիանոսին բանին չեկաւ անիկայ , որ կ'ուզէր շուտով բնակութիւն մը գտնել ՖէնՏէյմի ընտանեացը համար . ու շուսահատելով նոստարի մը գնաց երկրորդ առաւօտը յայտնելու իր միտքը : Աս աւելի յաջող երեցաւ , ու գեղեցիկ տուն մը ցուցուց իրեն՝ քաղաքին

Մէջ շիտակ ճամբու վրայ , վաճառակա-  
նութեան շատ յարմար : Աղբիանոս գնաց  
ու իրեք օրուան մէջ գնեց սա տունը , և  
գնոյն կէսը վճարեց հոն վրան ունեցած  
փոխանակագիրներով . ու առանց ամենևին  
յայտնելու 'Աորպերթին' դարձաւ տեղը ու  
պատրաստուեցաւ Ֆէնհէյսին բնակած  
դեղը երթալու : Չիերը լծուեցան՝ ժամէ  
մը հասաւ կառքը բլուրի մը վրայ , ուրկեց  
կլոր ճամբով մը Ալալտէին տունը կ'իջ-  
նար :

Այն օրուան ժամը իրեք էր , ու Յուս-  
տինէ պարտեղը ծառի մը շուքին տակ  
նստած՝ կարդալով կը գուարճանար , իր  
քովն ալ Ալալտէին սղտի տղան խոտերուն  
մէջ կը խաղար : Յուստինէն երբոր տեսաւ  
կառքը՝ զարմացաւ մնաց , ու չէր գիտեր  
թէ ինչ պիտի ըլլայ սա գեղեցիկ կառքը  
ասանկ ողորմելի ճամբու մը վրայ : Ճամ-  
բորդները կառքին պատուհանէն բարևե-  
ցին Յուստինէն՝ ու մէկէն կեցաւ կառքը :  
— Ո՛վ տէր Ատուած , կանչեց Յուստի-  
նէ , ահա Աղբիանոս : — Հրամմերես , ես  
եմ , ըսաւ Սիեկէր , ես եմ՝ որ եկայ տես-  
նելու հայրդ : — Օ՛խ չես ճանչնար , ը-

սաւ խեղճ՝ Վորպերթը , թէպէտ յիրաւի  
 չճանչցուելու մարդ մը եղայ : Յուստինէ  
 աղէկ մը նայելով Վորպերթին վրայ , —  
 Տէր Մատուած , եղբայրս է . ո՛հ , ի՛նչ եր-  
 ջանկութիւն այսպիսի բաժանմունքէ ետ-  
 քը՝ իրար տեսնել : Ա՛յ երկու երիտասարդ-  
 ները ցատքեցին կառքէն դուրս . վազեց  
 Վորպերթ գրկուեցաւ քրոջը հետ : — Ա՛յ  
 սիրելի Յուստինէ , ըսաւ , կրնաս դեռ  
 ինչպէս եղբօր մը նայիլ իմ վրաս ու սիրել .  
 ես աւագակաց գլուխ եղայ , ես կողօստե-  
 ցի Վալտէն ու յափշտակեցի ան ամէն  
 բաները որ Վգրիանոս հօրս կը խրկէր օդ-  
 նութեան համար :

Յուստինէ ոտք մը ետ քաշուեցաւ ա-  
 մրչնալով որ աւագակապետի մը հետ այս-  
 պէս կը սլազտուի . բայց Վորպերթ սկը-  
 սաւ ապահովել զինքը ու ըսել , — Օար-  
 մանալով ետ կը փախչիս՝ ո՛վ առաքինի աղ-  
 ջիկ . ո՛հ , մի վախեր՝ դարձեր եմ ես չա-  
 բութիւններէս , Մատուծոյ փառք : Ա՛յ  
 տանձին տեսութիւնը ինձի դարձի սլա-  
 ճառ եղաւ , և կը յուսամ որ Մատուած  
 ինձի տուաւ շնորհք մը ասկէ ետքը քրիս-  
 տոնէ արար ապրելով ապաշխարողի մը պէս ,



խմ' անցեալ մեղացս թողութիւն առնում',  
ու մխիթարութիւն ըլլամ անոնց՝ որոնց  
երկար ատեն մշտաց ու ամօթոյ առիթ ե-  
ղայ : Յուստինէին սիրտը ելած զրկեց նո-  
րէն իր եղբայրը , ըսելով . — Կոչեր  
եմ սիրելի՛ «Նորաբերթ , նոյնպէս մոռցեր են  
հայրս ալ մայրս ալ քու անցուցած կեան-  
քդ , և շատ աղօթքներ ըրեր ենք հրաման-  
քիդ համար : Աս չեմ դադրած զքեզ սի-  
րելէն , ու քեզի համար Աստուծոյ ողոր-  
մութիւնը խնդրելէն . թէ որ գիտնայիր թէ  
որչափ քեզի համար արցունք թափեր եմ  
սուրբ խորանին դիմացը , քանի քանի ան-  
գամ Աստուծմէ շնորհք խնդրեր եմ զքեզ  
դարձնելու մեր քովը : Ա երջասպէս լսեց  
աղօթքիս , ու մեր փափագը լեցուց տալով  
զքեզ մեզի :

Այլով ըսաւ «Նորաբերթ , — Ար զար-  
մացնես զիս սիրելի քոյր , որ դեռ քու սէրդ  
միաստ անշէջ սրահեր ես . աս մեծ ուրախու-  
թիւն է սրտիս :

Կիսկէր ինք իրեն կ'ուրախանար աս  
երկուքին երջանկութեանը միայ որ զե-  
րար տեսնելու ուրախութենէն չէին գի-  
տեր ինչ ըսեն : Ատքը ըսաւ Յուստի-

նէին , — Պէտք է որ երթաս հիմա իմա ,  
ցրնելու հօրդ թէ զինքը տեսնելու եկեր եմ .  
բայց չեսես որ Նորսիրթն ալ հետս է ,  
չըլայ թէ ծնողացդ վրայ մեծ այլայլութիւն  
մը բերէ . միայն ըսէ թէ հետը մէկը կայ՝  
զորն որ ուրախութեամբ պիտի ընդունիք .  
քառորդէ մը մենք ալ ետեւէդ կու գանք :  
Յուստինէն թեաւորուած , չկարծելու ա-  
րագութեամբ մը հասաւ տունը , ու Վալ-  
տէն որ Ֆէնհէյմին քովէն կու գար ,  
տեսնելով զինքը այնպէս ուրախ վազելով  
կու գար , գուշակեց մէկէն թէ իրենց ի-  
մացնելու աղէկ լուր մը ունի :

Հասաւ Յուստինէ ու Սիեկէրի գալը  
իմացուց . Ֆէնհէյմին սիրտը ելաւ ին-  
չուան աչքերը արցունքով լեցուեցաւ , եր-  
բոր իմացաւ Ագրիանոսին այսպէս սիրով  
շուտ հասնիլը , որ երկայն ճամբորդութիւն  
մը բերէ է զինքը տեսնելու և մխիթարելու  
համար . և մեծ հառաչանք մը ընելով ը-  
սաւ , մէկը միայն պակաս է մեր մէջէն :  
Յուստինէն մէկէն պատասխան տուաւ  
թէ . — Ագրիանոսը հրամանքներնուդ տա-  
լու լուրեր ունի եղբօրս վրայօք , և կը յու-  
սամ . . . ով դիտէ , ինչ վախճան պիտի

ունենայ աս բանս : Ֆէնհէյմ , կինը ,  
Յուստինէն , Վալտէն ու իր տղաքը եղան  
Սիեկէր դիմաւորելու :

Քանի մը վայրկեան քաղէէն ետքը ,  
տեսաւ Ֆէնհէյմ երկու ճամբորդները որ  
կ'երէին բլուրին վրայ , կենալով կանչեց ,  
— Տէր Ատուած , ինչ կը տեսնեմ : Ա-  
հա Սիեկէր ինքն է . բայց ո՞վ է իր հետը  
եղած պարօնը . որդիս չէ՞ մի , հասակը ու  
քալուածքը իմ 'Աորպերթիս է :

'Աոյնպէս 'Աորպերթ ճանչցաւ իր հայրը ,  
ու չկրնալով ալ համբերել սրտին զգացմա-  
նը , վաղեց մէկէն դիմացը , ինկաւ ոտքը ու  
ծունկերուն փաթթուելով , — Վ՛ի հայր ,  
ըսաւ , ահա որդիդ , թէպէտ մեղաւոր  
բայց հիմա դարձած ու զղջացած եմ : Այ-  
տուած թողութիւն տուաւ մեղացս , նե-  
րեցէք հրամանքնիդ ալ իմ չարագործ  
կեանքովս ձեզի տուած նեղութեանցս .  
կ'ուզեմ ասկէ վերջը բարի վարքովս առջի  
չարեացս փոխարէնը հատուցանել : Ինչ  
դունէ զիս հայր , ու դարձուր ինձի քու  
սէրդ ' թէպէտ և անարժան եմ :

Ֆէնհէյմ ոտք հանեց որդին , ու սրագ-  
տուեցաւ հետը , և ուրախութենէն չէր դի-

տէր ի՛նչ ըսէ : Ամէնուն աչքերը արցունքով լեցուեցան , ու աղաքը՝ որ ամենեւին անդէտ էին աս երկրորդ անառակ որդւոյն դիպուածէն , կու գային սիրով ձեռք սրագնելու :

Նորսերթի մայրը առաւ Ֆէնհէյլին ձեռքէն որդին սրտի տաստի կուրախու թեամբ մը : Նոյնպէս Վալտէն ալ եկաւ խնդակից ըլլալ Նորսերթին ազատութեանը շարագործներուն ցանցէն , ու բոլոր ընտանեաց հետ սկսաւ լալ :

Աս անյուսալի դարձը այսպէս սրտաշարժ տեսարան մը եղաւ , որ կարծես թէ բոլոր արարածք վկայ պիտի ըլլային աս ուրախութեանս և աս դարձիս . աս հանդիսաւոր թողութեանը , և աս խօստմունքներուն որ ապաշխարող մեղաւոր մը կ'ընէր իր ներողամիտ ու երջանիկ հօրը : Սոյն բարեբաղդ տեսութեանս մէջ արդեօք դեռ ուրիշ ի՛նչ խօսակցութիւններ չունէին ընելու : Արեգակը մոնելու վրայ էր , ու իր վերջի ճառագայթները կը ձգէր աս ժողովիս վրայ , իբր հաստաատելով ամէնուն սրտին ուրախութիւնը :

Վերջապէս կամայ կամայ հասան

Վալտէի բնակարանը, Նորպերթ հօրը ու մօրը մէջ տեղէն կը քաշէր ու անդադար իր ունեցած երջանկութիւնը յայտնելու վրայ էր : Արբոր հասան Վալտէին տունը, Ադրիանոս ըսաւ Ֆէնհէյմին, — Իրաւ պարարտ եզը մօրթելու դէպք մըն է աս, որ աւետարանի մէջ կը պատմուի, անառակ որդւոյն դարձին ուրախութեանը համար, բայց որովհետեւ հիմն ժամանակը չթողուր, կը յուսամ որ ուրիշ անգամ կարենանք ընել, թէ որ փափագներուս հասնիմ, աս ալ կ'ըլլայ :

Օրծաղեցաւ Ֆէնհէյմ՝ Ադրիանոսի ըսածին վրայ, թէպէտ ետքի խօսքը չհասկըցաւ : Առաքինի Վալտէն պզտի նախընթրիք մը պատրաստեց, պտուղ, գինի, հաց, ու ինչ որ գանուեցաւ ան միջոցին տունը. և կը ցաւէր որ ուրիշ բաներ ալ չունի հրամայելու. բայց իր բարեսրտութիւնը պակասը կը լեցնէր : Աւրիշ հող մ'ալ ունէր՝ չգիտնալով ո՞ւր բնակութիւն տայ Աիսկլէրի ու Նորպերթին. բայց ամէն բան առաջուց կարգի դրուած էր, ու խնայուց Ադրիանոս թէ ինքը իր բարեկամին հետ կ'երթայ գեղի պանդոկը. որ

իրկու սենեակ վարձեր էր դիշերը անցնելու, ու կառքն ալ ձիերուն հետ հոն պանդակն էր :

Արկրորդ օրը ամէնքը ներկայ եղան ձայնաւոր պատարագի և քարոզի, ետքը Սիւնկէր, Աորպերթ և Յուստինէ մեծ սեղան մը դրին Ալառէի պարտէզին մէջ՝ խնձորի մը ծառի տակ. ուր ժողովուցան ամէնքը կէսօրուան կերակուրը ուտելու, որ Ադրիանոս պատրաստել տուեր էր պանդակը՝ որպէս զի բարեպաշտ Ալառէին ծախք չըլլայ : Քէնհէյմ հաճութեամբ մը նայելով աս ժողովքին վրայ, ըսաւ, — Ի՞նչ պէս բարերար է Աստուած ու բազմագուծ . ո՞վ կը կարծէր ութը օր առաջ, որ աս որդիւնիս՝ զորն որ կու լայինք, քիչ ժամանակէ պիտի տեսնենք : Աւտի իրաւ է թէ Աստուած կարող է ամէն բանի, ու իր ողորմութիւնը շատ անգամ՝ ան ատենը կը փայլի, երբոր մարդիկ ամէն բան կորսընցուցած կը համարին : Չմոռնամ պիտի ամենեւին աս երջանիկ օրը . իմ գլխուս եկած դժբաղդութիւնները ոչինչ կ'երևնան ինձի՝ քանի որ կը տեսնեմ որդիս :

— Իրաւունք ունիս , սիրելի վարպետ , ըսաւ Ագրիանոս . վասն զի աս դժբաղդու թիւնս է որ մեզի աս մեծ մխիթարութիւնս տուաւ որդիոյ գտնալովդ : — Օարմանքով մը հարցուց Ֆէնհէյմ , թէ ատ ի՞նչ պէս կրնայ ըլլալ : Ագրիանոս նշան ըրաւ Վալտէին որ տղաքը խրկէ խոտերու վրայ խաղալու , որովհետեւ արդէն թեթեւ կերակուրը լմնցած՝ ու խմելու ժամանակ էր : Հեռացան տղաքը ու 'Աորպերթ սկսաւ պատմել իր մոլորութեանցը ու դարձին պատմութիւնը : Եւ իմացան ամէնքը թէ որ կրակը չըլլար , Վալտէ աս ճամբորդութիւնը պիտի չընէր Ագրիանոսին գեղը երթալու , ու աւազակաց ձեռքն ալ չիյնալու , 'Աորպերթն ալ աս սրտաշարժ դէպքը չէր ունենար՝ որով իր դարձը կ'ուշանար , և ո՞վ գիտէ՝ թերեւս անդարձ ալ կը մնար :

Աս պատմութիւնը ամէնուն աչքերէն սկսաւ արցունք բերել . Ֆէնհէյմ սեղանէն շեղած Յուստինէին ըսաւ որ երթայ բերէ աղօթագիրքը , ու սիրտ շարժող ձայնով մը կարդայ Օաբարիայի Յովհաննու Արկրուչի հօրը օրհնութիւնը : “ Օրհնեալ տէր Աստուած Իսրայէլի , որ այց ել և ա-

բար փրկութիւն ժողովրդեան իւրոյ ,  
Ինչուան ետքի տունը . Հոն եղողները՝ Ա-  
ՌԷՆ ԸՆԻՆ : Ատքը տղոց քօտը դասլն ու  
միաբան իրիկուան ժամը երթան , և նորէն  
Ատուծոյ շնորհակալ ըլլան իրեն այսչափ  
բարերարութեանցը փոխարէն :





## ԳԼՈՒԽ Ժ

### Չարմաւք .

ԼԵՐԿՐՈՐԴ օրը Ազրիանոս , որ ամէն  
նուն զարմանք մը բերելու համար բան մը  
չէր յայտնէր ամենեւին Ֆէնհէյմին թէ  
ի՞նչ ըրեր է ու ի՞նչ պիտի ընէ . նախաձա-  
շիկէն հոգը խնայուց թէ կ'ուզէ քիչ մը  
ժուռ գալու երթալ քաղաքին մէջ՝ ուտի  
հրաւիրեց իր առաքինի հայրազիրը , մայրը  
ու Զուստինէն մէկտեղ երթալու . 'Ար-  
պերթին տեղ չմնալով կառքի մէջ՝ խօսք  
դրին օր Ասկի եղջերու ըսուած սկանդոկը  
զանոնք գտնայ . ուր կը մտածէին ցորե-  
կուան հացը ուտել : Ֆէնհէյմ՝ չկրցաւ  
հրաժարիլ առ հրաւերքէն , թէպէտ զի-  
տէր թէ քաղաքը երթալը իր սրտին վէր-  
քը պիտի նորոգէր : Արբոր կառքը մտած  
կ'երթային՝ Ազրիանոս մտածմունքի մէջ  
կ'երևար , ու երկան ատեն լուռ կեցած ,

ինչուան իր ուղեկիցները շատ զարմացուց  
որ դիտէին իր զուարթ բնաւորութիւնը ,  
և կը տարակուսէին թէ ի՞նչ պատճառ  
տան աս լուծեանը :

Հասան վերջապէս քաղաքը , հրա-  
մայեց Ադրիանոս կառավարին տան մը  
դիմաց կենալ զորն որ ՖէնՏէյմ հազիւ  
կը ճանչնար . Ադրիանոս իջաւ կառ-  
քէն , ձեռք տուաւ Ագնէսին ու Յուսի-  
նէին , բարեպաշտ ՖէնՏէյմն ալ ետեւէն  
իջաւ չկրնալով խմանալ թէ ինչ պիտի ը-  
նեն աս տանը մէջ : Առաջ գնաց Ադրիա-  
նոս , զարկաւ դրան զանգակը . սլառաւ մը  
եկաւ բացաւ դուռը , ու ժպտելով — Ա՛հ  
դու ես սլարոն , ըսաւ , քիչ մը սպասէ ,  
երթամ մէկալ դատիկոններուն բանալիք-  
ներն ալ բերեմ . ու քանի մը վայրկենէն  
ետքը եկաւ Ադրիանոսին ձեռքը տուաւ  
կապոյ մը բանալիներ :

Ան ալ զրոյանէն մտադաղաթ մը հանե-  
լով բանալիներուն հետ ՖէնՏէյմին տուաւ  
ըսելով , — Սիրելի վարսետ ու հայրագիր ,  
հրաման տուր ինձի որ հետք սկստուե-  
լով աս նոր տանդ մէջ բարեմաղթեմ հրա-  
մանքիդ երկան կեանք : Աս տունս ձերն է ,

անցած շարաթ գներ եմ . կը յուսամ որ  
Մտուած օրհնէ զձեզ ձեր բանին գործ-  
քին մէջ , և ամէն փտանգներէ պահէ :  
Քէնհէյմ մեծ զարմանքով մը պապան-  
ձեցաւ մնաց . կարծէր թէ երազ կը տես-  
նէ , մէյմը բալլիքներու վրայ կը նայէր ,  
մէյ մը մագաղաթին , և չէր գիտէր թէ  
ինչ ըսէ : Իրան կ'ըսես որդեակ , կ'ըսէր ,  
աս քիչ ժամանակիս մէջ ինչպէս կըցար  
գնել աս տունս : Չկըցաւ ալ խօսք մը  
ըսել , ու արցունքը բաւական իր տեղը պա-  
տասխան կու տային : 'Նոյնպէս Մգնէսը  
ու Յուստինէն զարմանքներնէն մունչ կե-  
ցած կու ըային :

— Վ ձարեր եմ ըսաւ Մգրիանոս գնոյն  
երկը մասին երկուքը փոխանակազիրներով  
որ Վ ալաէի տուեր էի , որոնք 'Նորաբթ  
հետը բերաւ ինծի , և անոնց հետ աս  
տանձն ալ տուաւ , զորն որ իմ սիրելի  
մօրս կ'ընծայեմ , և տուաւ տանձը Մգնէ-  
սին . նոյնպէս աս մատնին ալ Յուստի-  
նէին համար էր . աղջիկը տարակուսով  
մը առաւ աս ընծան : Այլ հիմա որ աս  
տանս վերաբերեալ ամէն բան ըմպեր է , ը-  
սաւ Մգրիանոս , պէտք է կարգաւորել

հարկաւոր կահ կարասիքով ու զարդե-  
րով. բայց որովհետեւ չեմ գիտեր աս տանս  
հարկաւոր եղած բաները մանաւանդ որոնք  
կանանց կը վերաբերին, կ'աղաչեմ մօրս ու  
քրոջս որ հոգ տանին աս բաներուս որչափ  
որ կարելի է շուտով, ետքը ես կը վճա-  
րեմ զանոնք :

Ըս շատ երեցաւ առաքինի ընտանեաց,  
ու ջանաց Ֆէնչէյմ դէմ կենալ չափէ  
դուրս աս առատաձեռնութեանը, բայց ճար  
չեղաւ՝ Ագրիանոս անփոփոխ մնաց, և նոր  
տանտէրները ստորացուց բոլոր աս տունը՝  
որն որ շատ հաւնեցաւ Ֆէնչէյմ. աւելի  
ընդարձակ էր ու հանգիստ քան առջի  
այրածը : Ատքը նորէն աղաչեց Ագրիա-  
նոս մօրը ու Յուստինէին որ ետեւէ ըլլան  
զարդերը գնելու : Աւստի ինքը ու Ֆէն-  
չէյմ վաճառական մը գտան ու մէկ սակ-  
արկութեամբ մը ամէն հարկաւոր կահ  
կարասիքը գնեցին : Սիւնկէր երաշխաւոր  
եղաւ Ֆէնչէյմին, ու այսպէս քանի մը  
որէն հաստատուեցաւ Ֆէնչէյմ իր բանին  
գործքին :

Հրաշքով մը կարծես աս ամէնը գլուխ  
կաւ, ու երջանիկ ընտանիքը չէին գի-

տեր ինչպէս զարմանան անուասիրտ  
Մգրիանոսին ճարպիկութեան ու գործուհեութեան և սիրով ծառայութեանը  
վրայ :

Քաղքին ժամացոյցները կէսօրուան  
տասուերկուքը կը զարնէին . ու՛ Նորպերթ  
շատոնց ի վեր հասեր էր Ոսկի եղջերու  
սլանդոկը ու կ'սպասէր մէկանոնց գա-  
լուն . բայց մարդ մը չերևնալով չէր գի-  
տեր թէ ինչ պիտի ըլլայ ուշանալը , ու  
գաւթին մէջ վեր վար կը քալէր : Մէյ-  
մ'ալ յանկարծ տեսաւ որ մայրը ու քոյրը  
կ'անցնէին , հետերնին սայլ մը տան զար-  
դեր . վազեց հարցընելու թէ ինչ պիտի  
ըլլան ան բեռները , անոնք ալ եղածը  
պատմեցին իրեն : — Այլա՞ծ Նորպերթ  
ըսաւ , — Անման մարդ . հրեշտակ է Մգ-  
րիանոս : Հիմա կ'իմանամ իր շարժմ օ-  
րուան ծածուկ զբաղմունքը . չուզեց յայտ-  
նել ինձի իր գործոցը վախճանը , որպէս  
զի զիս ալ ձեզի հետ զարմացրուի : Ինչպէս  
կրնանք երախտագէտ ըլլալ աս ամէն բա-  
րեայր փոխարէն : Աւ մօրը և քրոջը հետ  
զնայ Նորպերթ նոր տունը . զարմայաւ  
մնայ տեսնելով մթերանոյններուն գիւրը ,

սենեակներուն բազմութիւնը ու կարգաւորութիւնը :

Ատրք ժողովուեցան մէկտեղ կեսօրուան կերակուրի . սեղանը առանձին սենեակ մը դրուած էր , որպէս զի ազատ ու համարձակ կարենան խօսիլ կերակուրի ատեն : Ատրքը գրէթէ աս ընտանեաց հաստատութեան վրայ էր , որ բողոքովն Ագրիանոսի շնորհքն էր : Կերակուրէն ետքը , նայինք ըսաւ Ֆէնհէյմ , ինչպէս պիտի կարենանք մեր սիրելի որդւոյն Ագրիանոսի այնչափ բարեացը փոխարէն հաստուցանել :

— Հանգիստ եղէք , ըսաւ Ագրիանոս ծիծաղելով մը , ես իմ բանս աղէկ կարգի դրեր եմ . առաջուց հաշուեր եմ , ու հրամանքնիդ ալ հիմա ինձի հետ կ'ըսէք թէ ձեր բանին գործքին մէջ հաստատուելու ըրած ծախքս ոչինչ է : Դուք զիս ձեր որդին կը կոչէք , շատ աղէկ , ես ալ կը փափագիմ աս խօսքս բողոքովն ստուգել : Ինձի իմաստուն , խելացի ու աստուածասպաշտ ընկեր մը սէտք է . և աս ամէն կոտորելութիւնները կը դանձմ ես իմ սիրելի Յուսաինէ քոջս քով . կ'ուզէք զիս երջա-

նիկ ընել . տուէք ինձի զանիկա , ու բան մը չպակսիր իմ երջանկութենէս : Աարմրոցաւ Յուստինէ , ու Ագնէս և Ֆէնհէյմ սկսան լալ . ‘Աորպէրթն ալ ծափ զարնելով գովեց աս խնդիրը :

Աւատի տուին Յուստինէն Ագրիանոսին՝ որ հաստատեց իր երջանկութիւնը , աւելի անքակտելի կապով միանալով աս սպառուական ընտանեացը հետ որոնց մխիթարութիւն էր եղեր :

Իրեք օրէն գնաց ժողովելու իր թուղթերը , ու աստուածածնաց ընծայման օրը Յուստինէին հետ ծնկան վրայ եկաւ սուրբ խորանին դիմացը՝ ամուսնութեան պսակի օրհնութիւնը առնելու : Այլտէի բոլոր ընտանիքը աս գեղեցիկ հանդիսիս ներկայ գտնուելով , պարզութեամբ մը իրենց սրտին բարեւադրութիւնները ըրին փեսային ու հարսին երջանկութեանը համար :

Հարսանեաց սեղանին մէջտեղը դրեր էին ոսկիէ տանձր անթառամ՝ ծաղկէ գեղեցիկ պսակուած : Ֆէնհէյմին սեղանակից բարեկամներէն ոմանք , չկրնալով իմանալ թէ ինչ պիտի ըլլայ աս , հարցուցին մեկնութիւնը : Աստուական ծերունին

պատմեց իրենց Սիեկէրին տանձին պատ-  
մութիւնը . ու ամէնքը զ՚ստուած օրհնե-  
ցին՝ որ այսպէս պտղի մը ձեռքովը այնչափ  
հրաշքներ գործեր է :





ԳԼՈՒԽ ԺԱ.

Նորայերրիև առաքիևի կեանքը .

ՄԻՐԻԱՆՈՍ և Յուստինէ զնացին  
անցնելու իրենց կեանքը երջանիկ խաղա-  
ղութեամբ : Ֆէնէչէյմ ձեռք զարկաւ իր  
վաճառականութեանը , ու Մստուած օրհ-  
նեց անոր գործքերը . որ քանի մը տարի-  
էն իր տխուր գժբաղղութենէն ետքը ,  
քաղքին հարուստներէն մէկը եղաւ . քոյն  
առաւ Վալտէին անդրանիկ աղջիկը , ու  
տղոցմէ մէկը՝ իրեն վաճառականութիւն  
սորվեցընելու համար : Այլ իրեն տանը  
վայելութիւնն ու հոգին եղաւ առաքիևի  
ու իմաստուն Նորայերթ օրդին , որ հա-  
ւատարիմ մնալով Մստուծոյ ըրած խոստ-  
մանը մէջ , բարի օրինակ եղաւ քաղաքի  
երիտասարդներուն : Ինքզինքը մեղքերու  
վտանգներէն ապահովցնելու համար , հե-  
ռացաւ ան երիտասարդներուն ընկերութե-

նէն՝ որոնց հետ ատենօք մտերիմ բարեկամ էր . իր ժամանակը աշխատանայ և կրօնական բարեպաշտութեան մէջ կ'անցընէր . ոչ երբէք հասարակաց ժողովքներու մէջ կը մտնէր . իր զուարճութիւնն էր ժուռ դալը , ան ալ միշտ իր ծնողացը հետ : Շատ կ'ախորժէր իր սլարասլ ատենները հոգևոր սլատուական գրքեր կարդալ , որոնց մէջ մեծամեծ նիւթեր կը գրտնէր խելացի խորհրդածութիւններ ընելու : Արբեմն իր ծնողաց դիմացը կը կարգար , ու շատ օգտակար եղեր էր իրեն երևելի Մասիլինն քարոզչին յետագայ հատուածը :

„Ամէն բան կը փոխուի աշխարհիս մէջ՝ բաց Աստուծոյ . յիշէ միայն ան յաղթութիւնները , քաղաքաց սլաշարումը ու ատնուիլը , փառաւոր դաշնադրութիւնները , որ աս թագաւորութեան ( ՃՂ . Աուդ . ) ատջի տարիները կ'ըլլային , որոնք դեռ քու սիրտդ կը շարժեն . որոնց շատերուն չէ թէ միայն հանդիսատես՝ այլ և մտանդներու ու փառաց մասնակից դանուկցար . կը հասնին ասոնք յիշատակարաններու մէջ ինչուան մեր թունկերուն .

խակ քեզի համար ուրիշ բան չէ, բայց եթէ երազ մը, փայլակ մը որ աներևոյթ ըլլալով օր է օր մեր յիշողութենէն ալ կը ջնջուի . ի՞նչ է ուրեմն, պզտի ճամբայ մը ունիս ընելու, կարծես թէ գալի օրերը՝ անցեալներէն աւելի հաստատուն կ'ըլլան : Արկար կ'երևնան տարիները քանի որ մեզ մէջ հեռու են . հաննելուն պէս կը ոչընչանան, մէկ վայրկենի մը մէջ աներևոյթ կ'ըլլան, դեռ դու խնդիր չգարձուցած կը գտնենք զմեզ ապշելով մը մահուան դուռը, որ դեռ հեռու կ'երևար մեզի ու իբրև թէ պիտի չհասնէր :

„Այլ աշխարհքիս, ինչ որ ատենօք մանկութեանդ տեսեր ես . նայէ մէյ մ'ալ հիմա : Քու մանկութեանդ տեսածին նոր կարգ մը յաջորդեր է, նոր մարդիկ տեսարանի ելեր են, նոր խաղեր ու նոր դերասաններ, նոր դէպքեր, նոր կնիքներ, նոր կրքեր, նոր դիւցազունք օրինակ առաքինութեանց ու մուլութեանց, նիւթ գուլութեանց, ծաղու և հասարակաց քննութեան ու դատաստանի . նոր աշխարհք մը առանց քու իմանալուդ դուրս ելեր է առաջինին աւերակացը վրայ :

„ Ինչպէս դու՝ ասանկ ամէն բան  
կ'անցնին քեզի հետ . արագութիւն մը որ  
մէկը չկրնար դադրեցնել , զամէն բան կը  
քաշէ կը տանի յաւիտենականութեան վը-  
հին մէջ . մեր նախնիքը երէկ մեզի ճամբայ  
բացին անցան , մենք ալ վաղը մեր ետեւէն  
քաղողներուն պիտի բանանք : Ար նորո-  
գութն հասակները , աշխարհքիս կերպա-  
բանը կը փոփոխուի անդադար , մեռածնե-  
րուն տեղը կ'անցնին կենդանիները , և ան-  
դադար իրար յաջորդելու վրայ են , հաս-  
տատուն և տևողական բան չկայ , ամէն  
բան կը փոխուի , ամէն բան կը հիննայ ,  
ամէն բան կը մարի . Աստուած միայն է  
նոյն միշտ . ժամանակի հեղեղը սահեցրնե-  
լով կը տանի բոլոր մարդկութիւնը իր աչ-  
քին առջևը , կը տեսնէ բարկութեամբ ո-  
ղորմելի մահկանացուները , որ ժամանա-  
կին սրնթմաց հեղեղովը կ'երթան , միան-  
գամայն կ'արհամարհեն զինքը անցնելու ա-  
տեն . ան վայրկենին մէջ ուզելով դանել  
իրենց ամէն երջանկութիւնը , ու անկէջ  
ելելով իր բարկութեանը ու վրէժխնդրու-  
թեանը ձեռք կ'իյնան , :

(Օր մը զրազեր էր Աորպերթ իր վա-

ճառանոցը վաճառքի կապոյնները կար-  
գի դնելու, և սլատառոտած զգեստով  
խեղճ մարդ մը տեսաւ՝ որ ողորմութիւն կը  
մուրար. առանց ուշ դնելու՝ Նորպերթ  
ձեռքը ոսկի մը տուաւ ու ինքը իր բանը  
կընայէր: Շնորհակալ ըլլալով աղքատը՝  
մասնաւոր ուշագրութեամբ մը նայեցաւ ու  
հառաչելով մը ըսաւ. — Պարոն զիս չես  
ճանչնար. գլուխը վեր վերցուց Նորպերթ  
ու նայելով, զո՞վ կը տեսնեմ, ըսաւ, Իգ-  
նատիոնն ես դու: — Հրամանք ես Պա-  
րոն, ու շատ թշուառ եմ, զթա՛մ ինձի:

Ըս մարդս Նորպերթի ընկերներէն  
մէկն էր, որ տանը վրայ յարձակելնուն  
վերջի աւազակութեանն ատենը փախեր  
էր: Արկայնահասակ երիտասարդ մըն էր՝  
հազիւ երեսուն տարուան. բայց յիսուն  
տարուան մը կ'երևար, և իր անատակ  
կեանքը ու թախտական սլտրտիլը՝ առող-  
ջութիւնը արեր էր. ճակատը ծերու պէս  
կնճռած, քայուածքը դողդոջոտ, աչուրնե-  
րը տկար ու խողոր մոլոր նայող, և մազե-  
րը ձիւնի պէս ճերմկցած: Պարեկից եղաւ  
Նորպերթ, զթացաւ խեղճին՝ ներս մտուց  
զինքը, ու ցած ձայնով հօրը քանի մը

խօսք ըսելէն վերջը քնն մը ուտելու բան տուաւ անոր :

Իգնատիոս չէր կրնար արցունքը բըռնել, ու՛ Սորպերթին խնդրելովը, սկսաւ իր գլխուն եկածները պատմել այսպէս . — Վիտենս ինչ կեանք անցուցեր եմ քեզմէ բաժնուելէս ետքը Պարոն Սորպերթ տեսնելով որ աչ մեր անարգ արուեստը չենք կրնար առաջ տանիլ՝ երկու հոգի մնալով, բաժնուեցանք իրարմէ, և ինչպէս որ լսեցի մեռեր է ընկերս Մատուծմէ ու մարդիկներէ թողուած : Աս աչ ան օրուանէ սկսեալ երկրէ երկիր թափառական կը սլորտիմ, մուրալով իմ հացս խեղճ ողորմելի թշուառութեան մէջ : Արուհե տե տղայութեանս ատենը արուեստ մը չեմ սորված, չկրցայ բանի մը գալ, և ուր որ ուզեցի մտնել՝ վորնտեցին զիս, կարծես թէ Մատուած դրօշմեր է ճակտիս վրայ դատապարտութեանս նշանը : Ամօթը չթողուց զիս դառնալ իմ ընտանեացս քով, որ անշուշտ ինչպէս քու ծնողքդ՝ ընդունած կ'ըլլային զիս :

Հարցուց Սորպերթ թէ ուր կը բնակին ծնողքդ : — Ա՛հ, Պարոն, ըսաւ ողոր-

մելին , պէտք է որ յայտնեմ հրամանքիդ  
 իմ գաղտնիքս որ մարդու չեմ իմացու-  
 ցած : Աստարի մը որդի եմ ես , ու աղէկ  
 կրթութիւնս առած . տասը տարի դպրա-  
 տունը անցուցի , ու աս կրթութիւնս շատ  
 ծախքի նստաւ հօրս . բայց ես աս խնա-  
 մոց համեմատ արդիւնք չցրցուցի , վասն զի  
 երբոր տասնըհինգ տարուան եղայ՝ չարամիտ  
 տղու մը հետ բարեկամութիւն կապեցի ,  
 որ շուտ մը զիս ալ իրեն նմանցուց : Աս-  
 կէց վերջը իմ ամէն մտաց զօրութիւնս քիչ  
 քիչ մարեցան , ու անասունի նմանեցայ  
 անզգայ ըլլալով ամէն բանի . սլատիժ ,  
 խրատ , յանդիմանութիւն , գովութիւն ,  
 ամէնը անտարբեր ըլլալով ինձի , աղտեղի  
 անասունի մը պէս կ'ապրէի , իմ զուար-  
 ճութիւնս անառակութիւնն էր , ու մոլու-  
 թիւնները սնունդս , բնական զօրութիւնս  
 ալ սկսաւ տկարանալ : Հայրս գիտնալով  
 աս իմ կեանքս՝ իր քովը գրազիր առաւ  
 զիս . բայց ամենեւին օգուտ մը չրաւ ինձի .  
 աշխատանքէ կը ձանձրանայի , ու ծու-  
 լութեամբս միշտ յանդիմանութեան ար-  
 ժանի կ'ըլլայի :

Աս խիստ խնամքէն , ու ծնողացս յան-

գիմանութիւններէն ձանձրացած , միտքս  
դրի փախչելով ազատիլ աս անտանելի  
լուծէն . ու որ մը շատ ստակ գողնալով  
հօրմէս՝ գիշեր ատեն փախայ : Քանի որ  
ստակ ունէի աղէկ էր բանս , բայց եր-  
բոր լմնցաւ՝ ստիպուեցայ ուրիշին օգ-  
նութեանը կարօտ ըլլալ : Թէ որ աշխա-  
տանք սիրէի , գործ մը կրնայի գտնել .  
բայց ազատասիրութեան հոգին անսանձ  
անառակութեանց հետ արգելք եղան ինծի  
համետ բանի մը ձեռք զարնելու . ու  
դնայի աւազակ եղայ , ինչպէս գիտես :  
Իսկ հիմա երիտասարդութեանս մէջ ան-  
պիտան կոճղ մը եղեր եմ . ես ինծմէ կը  
սարսափիմ , ատելի Մատուծոյ ու մարդ-  
կան . անօգուտ ծանրութիւն մը աշխարհ-  
քին , կը կանչեմ միշտ մահը , բայց կ'ե-  
րեայ թէ պատիժս դեռ չէ լեցուած :

— Արեւի Ազնաատիոս , ըսաւ՝ Աոր-  
պերթ , քու կեանքդ ալ իմինիս շատ նման  
է . և որովհետեւ մէկտեղ անօրէն կեան-  
քերնիս անցուցեր ենք , մէկտեղ առաքի-  
նութեան կեանքն ալ անցնելու ջանանք .  
ես սկսեր եմ աս կեանքս , Մատուծոյս հետ  
հաշտուեցայ , պատուոյ ձամբուն մէջ մտայ



մարդ եղայ ու քրիստոնեայ . դուն ալ ին՝  
ծի պէս ըրէ :

Ապէ ինչ կ'ըսեմ քեզի . կեցի ինձի  
հետ տասնըհինգ օր մը , և ամիս մը՝ թէ որ  
ուզես , ծնողքս ուրախութեամբ կը հա-  
ւանին աս բանիս , ասպահով եմ . ու աս  
միջոցիս մէջ խեղքդ գլուխդ ժողովէ , ճանչ-  
ցիր քու մեղքերդ , լայ , ետքը աղէկ խոս-  
տովանանք մը եղիր : Այս թուղթ կը գրեմ  
հօրդ քու գղջումդ ու թշուառութիւնդ  
յայտնելով , և կը ջանամ սիրտը շարժել .  
հայր է , կ'ուրախանայ անշուշտ տեսնելով  
որդւոյն գղջումը և ոտքը իյնալը . կը յի-  
շէ աւետարանին խօսքը թէ մեղաւորի մը  
գարծը աւելի ուրախութիւն կը պատճառէ  
երկինքը , քան իննըսունըինը արդարոց ա-  
ռաքինութիւնները : Թէ որ հայրդ , ինչ  
պէս ամենեին չեմ տարակուսիր , գթու-  
թեամբ գրեզ ընդունի , գնայ մէկէն ոտքը  
ընկիր ապերախտութեանցդ ու շարագոր-  
ծութեանցդ ներում ինդրէ . թէ որ չու-  
զենայ ընդունիլ , կեցիր մեր քովը : Օե-  
րացեր է հայրս ու շատ բանի միտք չկըր-  
նար դնել , մեր վաճառականութիւնն ալ  
կամաց կամաց կը մեծնայ . ուստի ես օգ-

նականի մը կարօտ եմ, և քու բարեսրտու-  
 թիւնդ տեսնելով տեղ մը կու տամ քեզի մեր  
 տանը մէջ : Ակսաւ Իգնատիոս լալ, և  
 մտածելով ընդունեցաւ ‘Աորպերթին ա-  
 ոաջարկութիւնը : ‘Աորպերթ գլխէն ին-  
 չուան ոտքը հագուեցուց զինքը, ու սե-  
 նեակ մը տուաւ իրեն, և սլատուական  
 հողեոր գրքեր առաջնորդելով իր դարձին.  
 և բարերազգաբար տեսաւ շուտով անոր  
 ուղղութիւնը : Տասնըհինգ օրէն ետքը խօս-  
 տովանեցաւ Իգնատիոս ու նոր մարդ ե-  
 դաւ : ‘Աորպերթ որ շատ ուրախացեր էր  
 աս մեծ մեղաւորին դարձին, օրհնեց զԱս-  
 տուած, շնորհակալ եղաւ որ արժանի հա-  
 մարեցաւ իրեն սէս մեղաւորը ընտրելու  
 գործի աս մոլորեալ ոչխարը կրօնից ու ա-  
 ոաքինութեանց ճամբան բերելու համար :

Արտաշարթ թուղթ մը գրեր էր Իգնա-  
 տիոսին հօրը, ու անհամբերութեամբ մը  
 սլատասխանի կ’ըստասէր . օր մը երբոր  
 Իգնատիոսին հետ կը խօսէր թէ ի՞նչ համ-  
 կ’առնէ մարդս Աստուծոյ ծառայութեանը  
 մէջ, մէյմ’ալ յանկարծ գեղեցիկ կառք  
 մը կեցաւ տանը դիմացը : Արժեց ‘Աոր-  
 պերթ թէ Ագրիանոսը ու Յուստինէն՝

ծնողքը տեսնելու եկեր են , վաղեց ճամբորդներուն դիմացը : Փառաւոր հագուած պարոն մը ու ազնուական աղջիկ մը ելան կառքէն , ու հարցուցին թէ Պարոն Նորայերթ Ֆէնհէյմը հոս կը նստի : — Ես եմ, ըսաւ Նորայերթ , ինչ կը հրամայէք : — Հրամանքնիդ էք , ըսաւ օտարականը , որ Իգնատիոս որդւոյս վրայօք թուղթ մը գրեր էք , զորն որ ձեր մարդասիրութեամբը քովերնիդ առեր էք : — Հրամանք ես , Պարոն , հրամանքէք տեսնելու աս պատուական երխտասարդը , բոլորովին զղջած և ուղղուած . ձեր գթութիւնը կը խնդրեմ իրեն համար , մեծ ուրախակցութեամբ մը՝ որ Իգնատիոսը պիտի գտնաք առաքինի բարեպաշտ ու քրիստոնեայ : — Եմէն բան մոռցուեցաւ , ըսաւ հայրը , բայց ո՞ր է որդիս որ մէյ մը գրկուիմ հետը : — Հոս եմ ես , կանչեց Իգնատիոս՝ մօտի սենեկէն ելելով , հոս եմ . Հայր իրաւցնէ իմ մոլորութեանցս ու քեզի պատճառած նեղութեանցս թողութիւն կու տամ : Աջանիկ հայրը արցունքով միայն կըցաւ իր որդւոյն պատասխան տալ , երկայն ատեն գրկած կեցան : Աղջիկը որ Իգնա-

տիտսին քոյրն էր, եղբօրը գիրկը ընկած իր սրտին ուրախութիւնը կը յայտնէր :

Ար դուարձանար Նորախերթ տեսնելով ասոնց գեղեցիկ ուրախութիւնը, միտքը կը բերէր իր դարձը և ընդունելութիւնը որ ըրեր էր հայրը :

Քանի մը օրէն դարձաւ Իդնատիոս իր ծնած քաղաքը հօրը ու քրոջը հետ, և ինչուան մահը քրիստոնէաբար ապաշխարողի կեանք մը անցուց : Ասկէ ետքը մեծ բարեկամութիւն հաստատեցին մէջերնին ու թղթակցութիւն Նորախերթին հետ. աս թղթերուն մէջ աղէկութեանց վրայ կը խօսէին շատ անգամ, ու իրար կը հաստատէին իրենց առաջադրութեանցը մէջ :

Իրենց չարագործ կենացը վախճանը ապաշխարութեամբ ըմբացաւ, ու հաստատուն դարձերնին ապահովուցուց իրենց Աստուծոյ մարդասէր գթութիւնը, որ բոլոր սրտով իրեն դարձողները չիմերժեր :



# Յ Ա Ն Կ Գ Լ Խ Ո Յ



Գ Լ . Ե .	Մըրբիկ . . . . .	5
Գ Լ . Բ .	Ապաւինեցու տեղ մը . . . . .	13
Գ Լ . Գ .	Տանձ . . . . .	25
Գ Լ . Դ .	Ճամբորդութիւն . . . . .	39
Գ Լ . Ե .	Անակնկալ դիպուած . . . . .	45
Գ Լ . Զ .	Դարձ . . . . .	53
Գ Լ . Է .	Յանդուգն խորհուրդ . . . . .	68
Գ Լ . Ը .	Հաշտութիւն ընդ Աստու ծոյ . . . . .	78
Գ Լ . Թ .	Երջանիկ ընտանիք . . . . .	88
Գ Լ . Ժ .	Զարմանք . . . . .	99
Գ Լ . ԺԱ .	Նորպէրթին առաքինի կեանքը . . . . .	107

365-1-1018

1871  
1872  
1873  
1874  
1875  
1876  
1877  
1878  
1879  
1880  
1881  
1882  
1883  
1884  
1885  
1886  
1887  
1888  
1889  
1890  
1891  
1892  
1893  
1894  
1895  
1896  
1897  
1898  
1899  
1900

4822-4827

